Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՍԿԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

I

ՀԵՆՐԻԿ ՎԵՐՆԵՅ

ԵՐԵԽԱՅԻ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

ՄԻՆՉԵՒ 6-ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍԱԿԸ

Թարգմ. լեհերէնից
ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

ԹԻՖԼԻՍ

151.7
Վ-52

3974

03 AUG 2010

«ՀԱՍԿԵՐ»-Ի ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

151.7
Կ-52

ՀԵՆՐԻԿ ՎԱՐԴԻՑ

փաստ
1909

ԵՐԵԽԱՅԻ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

ՄԻՆՉԵՒ 6-ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍԱԿԸ

Թարգմ. լեհերէնից՝
ՍՏ. ԼԻՍԻՑԵ[illegible]

ԹԻՖԼԻՍ
Էլեկտրաշարժ տպարան „ՀԵՐՄԼԻՍ“ ընկերութեան
1906 (142)

3974
0 9 08 2013
3145-2010
(1268-2010)

ՍԷՐ

Ինչպէս արծարծել սէրը երեխայի սրտում. փաղաքշանքներ. պարգեւներ. մերժում։

Մարդկութեան հէնց սկզբնաւորութիւնից մայրերի սրտերում վառւում է մի ջերմ և ոչ մի կողմնակի նկատումով չարատաւորւած խանդաղատանք՝ դէպի հարազատ զաւակները, — այն մայրական սէրը, այն սուրբ հուրը, որ ամենաթոյլ կոյսին անգամ ճշմարիտ հերոս է դարձնում և առանց աղմուկի կատարել է տալիս կրթութեան ծանր և կնճռոտ գործը։ Այդ զգացմունքի օգնութեամբ է, որ մայրը անտրտունջ տանում է ամենանեղութիւն և անքուն գիշերներ է անցկացնում հիւանդ մանկիկի անկողնու մօտ։ Այդ զգացմունքն է, որ նրան պահպանում է մարմնական տկարութիւնից և կարողութիւն է տալիս մի այնպիսի մեծ պաշտօն կատարելու, որպիսին նոյն իսկ ամենաուժեղ տղամարդը անկարող կը լինէր կատարել։

Բայց մօր սէրը երեսն չէ գալիս միայն մանուկի կեանքի առաջին շրջանում. այնպէս չէ, ինչպէս աւելի ստորին կարգի կենդանիների մէջ, որոնց մէջ այդ զգացմունքը տեւում է միայն այնքան ժամանակ, քանի որ նորածին էակը չէ կարողանում առանց ծծմօր օգ-

նութեան ապրել։ Ընդհակառակը, այդ սէրը տեւում է ամբողջ կեանքի ընթացքում, և երեխայի տարիքն ու հասակը ոչ թէ պակասեցնում են, այլ նոր ոյժ են տալիս նրան։ Առանց նպատակի չէ բացել բնութիւնը մայրական կրծքի մէջ սիրոյ այդ անսպառ աղբիւրը. դրա միջոցով պէտք է պատւասուի նոյնանման խանդաղատանք և երեխայի սրտի մէջ և հետզհետէ պէտք է ընդարձակւի այդ զգացմունքը, մինչև որ վերջ ի վերջոյ ընդգրկի ամբողջ մարդկութիւնը և բարձրանայ ամբողջ արարչագործութիւնը սիրելու ասպիճանին։ Ահագին է ուրեմն մայրական սիրոյ նշանակութիւնը և ահագին է նրա պաշտօնը, սակայն այդ պաշտօնը մայրական բնածին սէրը միայնակ չէ կարող կատարել։

Ճշմարիտ է անշուշտ սէրը ծնում է սէր ու որ առանց իր երեխային անկեղծօրէն սիրելու մայրը ոչ մի կերպ չի կարողանայ նոյն զգացմունքը ներշնչել նրան և արծածել նրա սրտի մէջ այն հոգեկան ջերմութիւնը, որի ճառագայթները տարածւում են բոլոր շրջապատող էակների և իրերի վրա։ Բայց նոյնպէս ճշմարիտ է որ մայրական սէրը և այդ սիրոյ արտայայտութիւնը պիտի ենթարկւեն բանականութեան հսկողութեանը, եթէ միայն պիտի թափանցեն մանուկի սրտի խորքը և նրա մէջ առաջ բերեն նոյնպէս հզօր փոխադարձ զգացմունք։ Եթէ բաւական լինէր միայն՝ սիրես, որպէսզի սիրւած լինես, մենք յաճախ չէինք տեսնի այն տխուր երևոյթը, որ նոյն իսկ ամենասասիկ սիրող ծնողների որդիք կամ վերաբերւում են նրանց բոլորովին անտարբեր, սառնասիրտ կերպով, կամ

եթէ սիրում են էլ, սիրում են միայն իրենց տեսակ, շատ անգամ պատճառելով նրանց մեծամեծ անբաւականութիւններ և դառնութիւններ։ Չի կարելի ասել որ այդպիսի երեխաներ չեն սիրում իրենց մայրերին, միայն թէ դա մի ինքնօրինակ սէր է, որ շաղկապւած է բարոյական թերութիւնների հետ, որոնք ծնողներին դառնութիւն են պատճառում։

Ոչ թէ այդպիսի սիրոյ մասին է մեր խօսքը, այլ մի այնպիսի զգացմունք ենք փափագում, որը մի տեսակ թալիսման է, մի թալիսման, որը երիտասարդին պահպանում է յաջորդ կեանքի մէջ այն ամենից, ինչ որ ստոր է և զազրելի, և դրդում է հետզհետէ առաջադիմելու ճշմարտութեան և առաքինութեան ճանապարհով։ Փափագում ենք մի սէր, որը իրաւունք տար հօրը դիմելու ծնողական յարկը թողնող զաւակին և ասելու. «Վարւիր այնպէս, որ երբէք ստիպւած չը լինես ամաչելու մօրդ առջև»։

Անվիճելի բան է որ իր զաւակներին չը սիրող մայրը երբէք չէ կարող նրանց սրտի մէջ սէր արծարծել։ Մի երեխայ, որ մայրական սէր չէ տեսել, ոչ մի գաղափար չի ունենայ այդ զգացմունքի մասին, ուստի չը պէտք է ծածկենք մեր սէրը դէպի զաւակները, այլ պէտք է երևան հանենք համապատասխան և յատուկ ձևով։

Մեր սիրոյ նշանները պիտի յարմարեցրած լինեն երեխայի հասակին և զարգացման։ Քանի որ մանուկը դեռ չէ խօսում, քանի որ չէ հասկանում իր շրջապատողներին, քանի որ չէ հասկանում մօր անձնազոհու-

թիւնն ու զոհաբերութիւնները,—մայրը պէտք է նրան ցոյց տայ իր խանդաղատանքը միայն փաղաքշանքներով։ Երեխան անգիտակցօրէն հասկանում է համակրութեան այդ ապացոյցները, ժպտում է մօրը, պարզում է ձեռիկները, աչիկները փայլում են, և ինքն էլ մի տեսակ աշխատում է դուր գալ։

Երեխայի մեծանալովն ու զարգանալովը, այդ մայրական խանդաղատանքի արտայայտութիւնները պիտի փոխուեն, և քանի աւելի է երեխան սկսում շրջապատողներին հասկանալ, այնքան աւելի պիտի բերանացի փաղաքշանքները շօշափողական փաղաքշանքների տեղը բռնեն։

Ոչ մի կերպ սակայն այդ փաղաքշանքները չը պիտի կրքոտ լինեն, որովհետև դա կրքոտութիւն է արծարծում նաև մանուկի հոգու մէջ։ Շարունակ համբուրելով և անդադար գուրգուրելով աւելի չէք գրգռի երեխայի մէջ այն իսկական զգացմունքը, որը սէր է կոչուում։ Այս չէ նշանակում որ չըպէտք է բոլորովին համբուրէք մանուկին և չըպէտք է գուրգուրէք նրան, միայն թէ այդ չը լինի նրա համար հանապազորդ հաց և ձանձրալի չը դառնայ։ Ինչպէս որ շօշափելով փաղաքշելը նոյնպէս և խօսքերով փաղաքշելը քանի երեխան աւելի հասակ է առնում հետզհետէ պիտի քչանայ, որովհետև թէ անդադար համբուրելը և թէ խօսքերով անդադար փաղաքշելը կարող է տաղտկալի դառնալ։

Չէ՞ որ բացի մեր խանդաղատանքը արտայայտելու այդ միջոցներից՝ կան ուրիշ, աւելի ազդու միջոցներ, այն է՝ երեխային ուրախութիւն պատճառելը

Ուրախութիւնը մի երանելի զգացմունք է, որ մանկական սիրտը լցնում է երախտագիտութեամբ, իսկ երախտագիտութիւնը ամենամօտիկ արիւնակիցն է սիրոյ և փոխուում է սիրոյ։

Շատ մայրեր կան, որ երեխայի ամեն ցանկութիւնը կատարում են. մէկ պատճառն այն է, որ թուլամիտ են և ուժ չունեն մերժելու իրենց հրեշտակի անուշ, քաղցը խնդիրքը, երկրորդ պատճառն այն է, որ այդ միջոցով կամենում են նրա սէրը գրաւել։ Մի կողմ ենք թողնում և ոչինչ չենք ասում ուրիշ ինչասակար հետևանքների մասին, որ առաջ են գալիս երեխայի երբեմն ամենաանմիտ ցանկութիւնները գոհացնելուց, կասենք միայն որ մայրերը շատ են սխալուում, կարծելով թէ այդ եղանակով կաւելանայ նրա սէրը դէպի մայրը։ Այն երեխան, որը սովոր է որ իր ցանկութիւնները իսկոյն կատարուեն, մի պարտականութիւն կը համարի այդ, մի այնպիսի պարտականութիւն, որ մայրը պիտի կատարի և որի համար ինքը առանձնապէս չը պիտի երախտագէտ լինի, ինչպէս որ երբ իրեն ուտեցնում են, հագցնում են կամ այլ սովորական ծառայութիւններ են իրեն անում.

Ճշմարիտ է՝ մերժումը երեխային ժամանակաւոր տհաճութիւն է պատճառում, բայց դրանով աւելի աչքի կընկնի նրա ուրիշ ցանկութիւններին բաւարարութիւն տալը, իսկ քանի աւելի մեծ է լինում իրաւացի մերժումով երեխային պատճառած տխրութիւնը, այնքան աւելի է լինում այնուհետև նրա ուրախութիւնը։

Վերջապէս մանկական հոգին էլ, որպէս և հասա-

կաւոր մարդկանց հոգին, չի գնահատում այն, ինչ որ հեշտութեամբ է ձեռք բերւում։ Այդ պատճառով է, որ իրենց զաւակներին երես տւող մայրերը երբէք չը պիտի փոխադարձ սիրոյ յոյս ունենան, որովհետև նոյն իսկ մայրական սէրը չի կարող առանց կամքի ուժի դիմանալ։ Այն մայրը, որը իր երախայի բոլոր քմահաճութիւններն ու անհիմն ցանկութիւններն է կատարում, ձեռք չի բերի նրա յարգանքը, երեխան կը սկսի նրա սէրը արհամարհել և բռնանալ նրա վրա, նատռաւել որ մեծանալով կը նկատի որ մօր սէրը անզօր և անուժ է։

Ուրեմն ոչ թէ երեխային երես տալը, այլ նոյն իսկ մօր իրաւացի բարկութիւնն է, որ զգալ է տալիս, աչքի ընկնող է դարձնում մայրական սէրը։ Երբ մայրը հրաժարւում է երեկոյեան երեխային համբուրելուց նրա որև է զանցառութեան համար, երբ նա ցոյց է տալիս իր տրտմութիւնն ու վիշտը այդ առիթով,— այդ աւելի է երեխային զգալ տալիս մի բոպէ կորցրած սիրոյ արժէքը, քան թէ ամենամեծ փաղաքշանքներն և կամակատարութիւնը։ Այստեղից բոլորովին չը պէտք է եզրափակէք, որ մենք բոլորովին դէմ ենք փաղաքշանքների, որ երեխան ինքն է պահանջում, երբ ինքը երեխան է մեզ մօտենում, որ իրեն փաղաքշենք. նա այս դէպքում ինքը ճշմարիտ, իսկական սէր է զգում դէպի մեզ և այդ նրա սէրը պահանջում է որ և է կենդանի արտայայտութիւն։ Պէտք է օգուտ քաղենք այդ պիսի բոպէներից և նրան ետ չը մղենք, ձանձրալի չանենք այն, ինչ որ երեխայի հոգու իսկական պահանջն է։

Ուստի ետ չը մղենք մեր կրծքին սեղմւող երեխային, չը ճնշենք՝ երբեմն գուցէ ոչ բոլորովին սեփական, բայց միշտ ճշմարիտ զգացմունքի արտայայտութեան այդ միջոցը. չը վիրաւորենք երեխաներին անժամանակ նկատողութիւններով, որովհետև կը սառչեն դէպի մեզ, կը կորցնեն վստահութիւնը—ամենայն սիրոյ այդ հիմունքները։ Ամենապարզ դէպքերը կարող են և պէտք է ծառայեն այդ զգացմունքի արծարծմանը երեխայի մէջ։ Փոքրիկ նուէրներ, նոյն իսկ երեխաների համար անհրաժեշտ իրերի նուէրներ, եթէ միայն մի առանձին ձևով են տրւում, նրանց մէջ երախտագիտութիւն են զրգռում և սէրն են ամրապնդում։ Աւելի մեծ նշանակութիւն ունի նուիրատուութեան եղանակը, քան թէ նուէրն ինքը։ Երեխան դեռ չէ հասկանում իրերի դրամական արժէքը և չէ գնահատում նրանց գնի համեմատ, այլ միայն այն տպաւորութեան համեմատ, որ նրանք իր վրա գործում են։ Երեխային աւելի քիչ են յափշտակում և ուրախացնում հազւագիւտ ընծաներ, թանկագին խաղալիքներ, քան թէ մօր ուրախութիւնը, որ փայլում է նրա աչքերում, երբ նա նուէրը տալիս է իր զաւակին։ Օրինակ՝ երեխան շատ ժամանակ է որ փափագում էր ունենալ մի նկար. այդ իրը նրա սրտի ամենաջերմ ուզածն էր. թէկուզ տասնապատիկ աւելի թանկ ու աւելի գեղեցիկ խաղալիք առնի նրա համար դրա տեղ մայրիկը, նա իր երեխային այն ուրախութիւնը չի պատճառի, ինչ որ առնելով հէնց այդ նկարը։ Երեխայի աչքերը կը ցոլան և նրա դէմքը կը փայլի ցնծութիւնից, իսկ եթէ բացի այդ մայրը կը պատմի

թէ որչափ պիտի չարչարուէր, որքան խանութ պիտի մտնէր, մինչև որ գտաւ այդ իրը,—այն ժամանակ ուրախութիւնը, երախտագիտութիւնն ու սէրը դէպի մայրիկը այլ ևս անկարագրելի կը լինի, որովհետև երեխայի բաւականութիւնը սաստկացած կը լինի այն բանից, որ նա առաջ տեսած էր թէ քանի քանի անգամ չեն կատարուել իր անհիմն և անմիտ ցանկութիւնները։

Այդ դեռ բաւական չէ. եթէ կամենում ենք աւելի յարատև դարձնել երեխայի մէջ այդ զգացմունքը, հնարենք դէպքեր, որ նա ինքը մեզ համար որ և է բան անի, զրկելով որ և է բանից իրեն։ Որովհետև սիրում ենք ոչ միայն նրանց, որոնք մեզ բարութիւն են անում, այլ աւելի ևս նրանց, որոնց ինքներս կարողացել ենք որ և է բարութիւն անել։ Թող երեխան մի քանի ժամանակ նստի իր հիւանդ մօր անկողնու մօտ և նայի նրան, թող մի փոքր ինքն իր քնի հետ կռուի, որ յանկարծ աչքերը չը փակի. այդ աւելի կուժեղացնի նրա մանկական սէրը։ Թող մայրիկի համար ծաղիկներ հաւաքի, թող անսպասելի նուէրներ տայ՝ իր ձեռագործը կամ աշխատանքը, այն ժամանակ նրա կրաւորական սէրը կը դառնայ ներգործական։

Մօրը ցոյց տրուած սիրոյ ամենամեծ աստիճանը, մեր աչքի առաջ ունեցած հասակում, այն կը լինի, երբ երեխան կը հրաժարուի որ և է բաւականութիւնից իր ծնողի օգտին։

Այս արդիւնքը կը ստանանք, եթէ մանկական առաջին տարիներում նպատակայարմար ուղղութիւն կը տանք երեխային. երեխան կը մեծանայ ուրախ և

զուարթ միջնորտի մէջ, եթէ նրա առաջին տարիները կը լուսաւորի մայրական անկեղծ սէրը, ոչ թէ մօր փոխանորդների—դայեակների, դաստիարակչուհիների —շինծու քնքշութիւնը։ Այն ժամանակ նա ոչ միայն կը սիրի իր մօրը, այլ և նրան կը յարգի, կը վախենայ՝ չը լինի թէ նրա սէրը կորցնի։

Ի՞նչից է ուրեմն կախուած խելացի սէրը։ Այն յարգանքից և պատկառանքից, որը նախ և առաջ արտայայտւում է մանուկի հնազանդութեան մէջ։

Սակայն մի հանգամանքի մասին պիտի այստեղ յիշենք։ Անիմաց մայրեր, կամենալով երեխայի սէրը գրաւել, իրենց անսահման սիրոյ անունով են խօսում և դիմում են երեխային մօտաւորապէս հետևեալ բառերով։—«Լևոնիկ, դու ինձ չես սիրում, էլ իմ բարի տղաս չը կայ։ Ահ, ինչ անբախտ կին եմ»։ Այս և այսպիսի դարձուածքներ յաճախ դուրս են թռչում թոյլ մայրերի բերանից, որոնք անընդունակ են երեխաներին ղեկավարելու։ Կարծում են թէ երեխայի սիրտը կը շարժեն և կը համոզեն իրենց կամքը կատարելու... բայց չարաչար սխալւում են, որովհետև երեխան դեռ չի հասկանում իր մօր սիրոյ սաստկութիւնը և առհասարակ շուտով ցրւելով՝ բոլորովին մոռանում է նրա խօսքերը։ Մայրերը չեն հասկանում որ երեխաները դեռ չեն ըմբռնում այն կապը, որ կայ մօր սիրոյ և իրենց խոնարհութեան մէջ, չեն հասկանում որ երեխայի սէրը չէ կարող այնպէս մեծ լինել, որպէս մօր սէրը, որ երեխաները դեռ նոր են սիրել սովորում, մինչդեռ մայրական սէրը արդէն զարգացած կազմակերպած է լինում։

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ

Երեխայի կամքը։—Ինչպէս ընտելացնել հնազանդուելու։—Հրաման և հրամաններին հնազանդելու ընտելացնելը։ Անհրաժեշտ պահանջներ։

Երեխայի չը կազմակերպւած կամքը նման է այն գետին, որը հոսում է աւազոտ հողի վրա և ցածր ափերի մէջ ու տարուայ մեծ մասը չէ կարող ծառայել նաւարկութեան համար, իսկ միւս ժամանակ աւելի վնաս է բերում, քան թէ օգուտ։ Կամենալով այդ գետը աւելի օգտաւէտ դարձնել, ամրացնում ենք նրա ափերը, թումբեր ենք շինում, առուներ ենք անց կացնում, ջրարգելներ ենք կառուցանում և այդպիսով նրա հոսանքը կանոնաւորում ենք, այնպէս որ նա կարողանում է աւելի մեծ բեռնակիր նաւեր բարձրացնել։

Հէնց այդպէս էլ պէտք է վարուել մանկական անկազմակերպ կամքի հետ։ Եւ ինչպէս որ չենք չորացնում գետը, ցանկանալով վերև յիշած անյարմարութիւնները վերացնել, այնպէս էլ չը պէտք է խեղդենք կամքը, որը կարող է երբեմն ինքնակամութիւն դառնալ, այլ պէտք նրան հնազանդութեան սահմանների մէջ առնենք։ Եթէ երեխայի կամքը չէ հակասում բանականութեան պահանջներին, չը պիտի արգելքներ դնենք նրա առաջ, ինչպէս որ չենք կանոնաւորում գետի ընթացքը այնտեղ, որտեղ նրա հոսանքը կանոնաւոր է, ափերը բարձր և տաշտը բաւականին խոր։

Ուրեմն՝ հնազանդութիւնը, երեխայի կամքի ենթարկութիւնը մեր կամքին՝ միայն կրթութեան մի միջոց է, ոչ թէ կրթութեան բուն նպատակը, տան շինութեան համար անհրաժեշտ նեցուկափայտերն են, ոչ թէ ինքը տունը։ Երեխան մեզ պիտի հնազանդի ոչ թէ նրա համար, որ ամբողջ կեանքը մեզ լսի, այլ նրա համար, որ ընտելանայ հնազանդուելու բանականութեան ձայնին և իմանայ բարձրագոյն բարոյական օրէնքին հպատակուել։ Իսկ քանի որ հնազանդութիւնը բնական յատկութիւն չէ, այլ իւրացրած, ուստի նա մի յայտնի վարժութիւն է պահանջում. երեխային պէտք է վարժեցնել հնազանդութեան մէջ, ինչպէս որ վարժեցնում ենք ուրիշ առաքինութիւնների մէջ։ Մանկական կեանքում դա շատ կարևոր երևոյթ է, կարծես մի անտեսանելի թել է, որ կապում է դաստիրակին իր սան հետ, կամքի առաջին կրթութիւնն է։ Զուր խօ չեն ասում թէ ով որ իրեն չէ ընտելացրել հնազանդուելու, երբէք չի կարողանայ ուրիշներին հրամայել,—ասել է թէ՝ երբէք չի զարգացնի իր կամքը այն աստիճան, որ հարկադրի ուրիշներին իրեն հնազանդուելու։ Վերջապէս առանց հնազանդութեան՝ էլ ինչ խօսք կարող է լինել կրթութեան մասին, քանի որ կրթական ամենալաւ ներգործութիւնները պիտի անհետացնեն և չը պիտի դրոշմեն մանուկի հոգու մէջ։

Այժմ հարց է ծագում թէ ինչ տեսակ հնազանդութիւն պիտի լինի մանուկի հնազանդութիւնը կեանքի առաջին շրջանում, մինչև 6-տարեկան հասակը։

Երեք տեսակ հնազանդութիւն կայ. մեքենայական, որ կոյր հնազանդութիւն է կոչում և որին երեխան

հնազանդում է ընտելացած լինելուց. գիտակցական, երբ արդէն իմանում է և հասկանում է մեր հրամանի շարժառիթը, և վերջապէս՝ մեզ սիրելուց կամ բարոյական օրէնքը յարգելուց առաջացած հնազանդութիւն։ Մանուկից չենք կարող պահանջել վերջին երկու տեսակ հնազանդութիւն, քանի որ նրա բանականութիւնը դեռ սաստիկ թոյլ է, իսկ զգացողութիւնը տարտամ է և ոչ բաւականին խոր։ Ուրեմն ամենափոքր հասակից պէտք է պահանջենք որ կուրօրէն հնազանդի մեր պատուէրներին, մի բան, որ շատ էլ դժուար չէ, միայն թէ պահանջում է մեծ հետևողութիւն և հաստատամտութիւն։ Եթէ շատ և շատ ընտանիքներում պատահում ենք անհնազանդ երեխաների, պատճառը ծնողներն են, որոնք չեն իմացել զանազանել թէ ինչ տեսակ հնազանդութիւն է յատուկ մանկական կեանքի ամեն շրջանին։ Նրանց դուր էր գալիս, որ մի հինգ տարեկան մանուկ հասկանում էր կամ հարցնում էր իրենից պահանջած հնազանդութեան պատճառը. այդ շոյում էր նրանց ինքնասիրութեանը. միամիտները չափազանց ուշ էին նկատում, որ հլու հպատակութեան չընտելացած երեխան չէ սովորել հնազանդելու նրանց հրամաններին նոյն իսկ այն ժամանակ, երբ լաւ էր հասկանում այդ հրամանների պատճառները։

Ամենից լաւ է այնպիսի բոպէներ ընտրել երեխային հնազանդութեան մէջ վարժեցնելու համար, երբ երեխայի կարմրատակած դէմքի վրա նկատւում է ուրախ տրամադրութիւն։ Այդ ժամանակ ահա մայրը քաղցր ձայնով մօտ է կանչում իր մանուկին, պատուի-

բում է բերել և տանել խաղալիքները, տալիս է փոքրիկ յանձնարարութիւններ, որ նա սիրով կատարում է։ Իսկ եթէ մայրը պատուէրներ է տալիս այն ժամանակ, երբ երեխան զբաղուած է լինում որևէ ուրիշ բանով և ուշք չէ դարձնում նրա խօսքի վրա, թող զուր չը յանդիմանի նրան, չպատժի, թող անհնազանդութիւն չը համարի այդ, այլ մօտենայ երեխային, մեղմ խօսքերով նրա ուշքը հեռացնի այն առարկայից, ինչով նա այդ բոպէին զբաղուած է, և այն ժամանակ թող կրկնի իր հրամանը։

Նոյնպէս թող մայրը չը ստիպի երեխային հնազանդելու այն ժամանակ, երբ երեխան գրգռուած է լինում, իրասածի է, դէմքը խոժոռեցրել է, յուզւում է, մի խօսքով՝ այն ժամանակ, երբ տրամադրուած չէ հնազանդելու։

Բոլորովին ուրիշ բան է, երբ երեխան ուրախ է. այն ժամանակ կարելի է մօտ կանչել նրան և այդպիսով կընտելացնի հպատակելու մօր քաղցր կանչին, և այդ կը լինի արդէն հնազանդութեան կրթութեան առաջին աստիճանը։

Երբ այս աստիճանին կըհասնենք, կարելի կը լինի հետզհետէ ընդարձակել հրամանների շրջանը, բայց շատ աստիճանաբար և մեծ շրջանկատութեամբ։ Օրինակ՝ երեխաները սովորութիւն ունին դէս ու դէն շպրտել իրենց խաղալիքները. չը պիտի պահանջենք որ նրանք իսկոյն բոլորն էլ հաւաքեն տեղը դարսեն — այս պահանջը շատ դժուար և ձանձրալի կը լինէր մանուկի համար։ Բայց չէ՞ որ այստեղ մի յարմար դիպուած է ներ-

կայանում նրան կարգապահութեանն ու հնազանդութեանն ընտելացնելու, ուստի՝ օգուտ քաղենք այդ դիպուածից, դարսենք բոլոր խաղալիքները, բացի մէկից տուփի մէջ և պատիրենք որ երեխան դարսի մնացած մէկը—այս արդէն դժուար բան չի լինի նրա համար:

Վարելով այս եղանակով, կամաց կամաց կընտելացնենք երեխային աւելի դժուար պատէրներ կատարելու: Բայց միշտ աչքից չը պիտի բաց թողնենք այն որ ընտրելու է այնպիսի ժամանակ, երբ երեխան կը կարողանայ յօժարակամ կատարել այդ պատէրները:

Երբ մանուկը կը սովորի մեր այնպիսի ցանկութիւնները կատարել, որոնք չեն հակասում նրա կամքին, ամեն տեսակ յանդիմանութիւններ և հարկադրութիւններ աւելորդ կը դառնան, որովհետև նա արդէն ինքը վարժուած կը լինի անմիջապէս հնազանդուելու:

Այնուհետև կարող ենք աւելի մեծացնել մեր պատէրները:

Հրամայենք արդէն ոչ թէ գուրգուրանքով, այլ աւելի կտրական ձևով: Իսկ այն դէպքում, երբ մանուկի կամքը մեր կամքին հակառակ կը լինի, մեր խօսքը թող կարճ լինի, հակիրճ և կտրուկ, որպէս զի նա գիտենայ որ տուած հրամանը պիտի անպայման կատարի:

Եթէ օրինակ՝ մանուկը զբօսնում է, իսկ մենք նկատում ենք որ տուն վերադառնալու ժամանակ է, առանց այլևայլութեան ձեռքիցը բռնենք և տանենք: Գուցէ երեխան լաց լինի, չուզենայ թողնել կանանչ դաշտը, պարտէզը, կամենայ աւելի երկար

մնալ մաքուր օդի մէջ, — ուշք չպիտի դարձնենք այդ բանի վրա, իբր թէ նրա լացը չեն լսում, նրա տրամութիւնը չենք նկատում, դարձնենք նրա ուշադրութիւնը որև է հետաքրքրական առարկայի վրա և իսկոյն կը համոզուի որ բոլորովին անտարբեր ենք դէպի նրա լացն ու տրամութիւնը, որ միևնոյն է՝ դրանով ոչինչ շահելու չէ: Այս ճանապարհով նա կը սովորի հրամանները անտրտունջ կատարել:

Այսպէս երեխան ժամանակով կընտելանայ մեր հրամանը անփոփոխելի համարելու և լսելով մեր խօսքերը թէ՝ «Տուն գնանք» ուրախ-ուրախ կը վերադառնայ:

Նոյնը վերաբերում է և արգելքներին. օրինակ, երեխան մօտենում է շաքարամանին, որպէս զի մի կտոր շաքար վերցնի: Տեսնելով այդ, չը պիտի ամանը հեռացնենք ու դնենք սեղանի միւս ծայրին, որովհետև անշուշտ երեխան կրկին կը մօտենայ շաքարին, այլ հակիրճ պիտի ասենք՝ «Չի կարելի,» և պահենք ամանը պահարանում: Թողնել շաքարամանը սեղանի վրա կը նշանակէր սաստիկ գայթակղութեան ենթարկել երեխային, որ դեռ կիսով չափ է սովորել մեր կամքին հպատակուել: Միայն այն ժամանակ պէտք է այդ անենք, երբ երեխան լաւ կը համոզուի որ մեր կամքը անդրդուելի է:

Այժմ սկսենք ընտելացնել երեխաներին որ փոքրիկ ծառայութիւններ մատուցանեն մեզ, բերեն կամ տանեն սեղան, ոտի աթոռիկ, գիրք և այլն, աւելի քիչ ուշադրութիւն դարձնելով այն բանի վրա, որ այդ մէջ [illegible] նա որ և է զարմութեան հետ է. միայն թէ խիստ

ԳՐԱԴԱՐԱՆ

պիտի հսկենք որ տուած հրամանը անպայման կատարի։ Եթէ այսպէս հետևաբար վարելու լինենք, մեր հրամանն ու նրա կատարածութիւնը այնպէս սերտ կապերով կը շաղկապուեն իրար հետ երեխայի մտքի մէջ, ինչպէս շաղկապւում են պատճառն ու հետևանքը,—որպէս մի բնական անհրաժեշտութիւն։

Կամենալով երեխային ներշնչել մի այսպիսի հպատակութիւն մեր կամքին, չը պիտի չափազանց շատ հրամաններ տանք, չպիտի ի չար գործ դնենք հրամայելու իրաւունքը, մանաւանդ երբ երեխան անմեղ փոքր ձեր է անում իրերի հետ ծանօթանալու համար։ Եթէ օրինակ՝ նկատում ենք որ մատը կրակին է մօտենում, չը պիտի արգելենք, որովհետև երեխան այդ նում է կրակը դիտելու համար և եթէ մէկ անգամ մատն այրի, էլ միւս անգամ երբէք չի մօտեցնի կրակին։ Արգելքը միայն աւելի չը գրգռի նրան և աւելի կը դրդի մեր կամքին հակառակելու։

Այսպէս վարելով մօտ երկու տարի, չորս տարեկան երեխային կընտելացնենք անպայման հնազանդութեանը։

Չորս տարեկան երեխան ինչքան էլ գրգռած բարկացած լինի, պիտի մայրիկի հէնց առաջին կանչը մօտենայ և նայի նրա աչքերին։ Այդ արդէն մեծ քայլ կը լինի նրա բնաւորութեան կրթութեան գործում, քանի որ մօր հայեացքը, յանդիմանող թէ յորդորող, երեխային ուշքի է բերում և ստիպում է մտածել և արագ պիսով խիստ պատիժներին դիմելու առաջն է առնում։ Ով որ գիտէ թէ օրպիսի դառն և ցաւակար հետևանք թողնում պատիժները երեխայի հոգու մէջ, կը հասկանայ թէ որչափ նպատակայարմար է և կարևոր անհրաժեշտութեան ընտելացնել նրան։

Աւելի մեծ երեխայի հետ պէտք է ժամանակ առնել, հպատակութեան աւելի դժուար փորձեր անել։ Կարելի է նրան պատուիրել որ թողնի հետաքրքրական զբաղմունքը մեզ կամ ուրիշներին որ և է հանգստութիւն մատուցանելու համար։ Եթէ երեխան ամենայն ծամածռութեան, անարտունչ կատարում է մեր հրամանները, կարող ենք հաւատացած լինել որ արդէն հպատակացրել է մեր կամքին անմիջապէս և անյապաղ հնազանդուելու սովորութիւնը։

Վերև յիշեցինք որ սկզբում՝ երեխային մէջ վարժեցնելիս չը պիտի չափազանց շատ պահանջենք, այլ պիտի աչքի առաջ ունենանք թէ ինչ կարող է նա յօժարութեամբ կատարել։ Ցաւախ սակայն երեխան, հակառակ իր ցանկութեան, չի կարողանում հնազանդուել մեզ և այս ակամայ անհնազանդութիւնը կարող է շատ հեշտ փոխուել դիտաւորեալ անհնազանդութեան։

Այսպէս օրինակ՝ երբ մայրը կամենալով պարծենալ իր երեխայով՝ հրամայում է նրան ուրիշների արկայութեամբ անգիր ոտանաւոր կամ իր անունը կամ որևէ այսպիսի մի բան ասել, կարող է պատահել որ երեխան՝ մեծ ընկերութիւնից շփոթուելով կամ այդ պէսին տրամադրուած չը լինելով, չը կարողանայ մօր օրքին հնազանդուել, որովհետև բերանում ձայնը կը-ռում է և ոչ մի կերպ չի կարողանում պահանջած

բառերը արտասանել,—այդ անհնազանդութիւնը ակ
մայ է, այդպիսի պարագաներում պէտք է խոյս տ
պահանջելուց։

Վերջապէս շատ վնասակար է մշտական, արդ
դար վարժութիւնը կանոնաւոր և անշեղ զեկավ
րութիւնը։ Այս պակասութիւնը յատուկ է տարիքա
մարդկանց կամ նեարդայնացած մայրերին, որոնք
վոր են շարունակ փնթփնթալու։

Անվերջ հրամանները, արգելքները, խրատն
և յորդորները այնպէս շփոթեցնում են երեխային,
վերջի վերջոյ չի իմանում թէ ինչ է թոյլատրելի
ինչ ոչ, նա դառնում է կամ կամազուրկ և անբան մ
կամ յամառ, իրասածի և անհնազանդ։

Առաջին թերութիւնը նկատւում է աղջիկն
մէջ, սրանք աւելի նկուն են, հեզ և մեղմաբարոյ, մի
տղաների մէջ, սրանք աւելի ուժեղ են և ի բնէ ա
գործունեայ։ Իհարկէ երեխան պիտի լինի ոչ թէ
խաղալիք մեքենայ, որը այս կամ այն կողմն է թը
կոտում թելին հնազանդելով, այլ մի բանական է
որ սեփական կամքը գործ է դնում որպէս իր, նո
պէս և ընդհանուրի բարօրութեան համար, և հնազ
զութիւնը ինչքան էլ այդ աստիճանի վրա դեռ
գիտակցական լինի, պիտի նախապատրաստի նրան
պագայում սեփական բանականութեանն ու խղճմտ
քին հպատակելու։

ԸՆՏԵԼԱՅՈՒՄ

Ինչպէս սովորեցնել ժամանակին ուտել խմել, քնել, բնական
պէտքերը կատարել, հագնել։—Դիմացկութիւն։

Վերև ասածից արդէն տեսնում ենք թէ ինչ նշա-
ւոր դեր է խաղում կրթութեան մէջ ընտելա-
ցումը բայց աւելի ևս կը հասկանանք նրա մեծ կա-
ւորութիւնը, երբ կը մտաբերենք որ կրթական այդ
եղանակից կարելի է օգտուել ուրիշ միջոցից առաջ, որով-
տև կարելի է գործ դնել անմիջապէս, շատ վաղ, գը-
եթէ երեխայի ծնելու օրից,—այն ժամանակ, երբ
ուրիշ կրթական միջոցները դեռ բոլորովին ապարդիւն
ն անցնում։ Ճշմարիտ է՝ բանականութեան օգնութեամբ
նոր բերուած առանձնայատկութիւնները ժամանակով
աւելի մեծ արժէք ունեն, աւելի են պատիւ բերում
արդկանց, քանի որ ապացոյց են բարոյական ուժի աւե-
և աւելի ամրապնդելուն, բայց միշտ աւելի անփո-
խելի և հաստատ են այն առանձնայատկութիւնները,
ոնք ձեռք են բերուած սովորութեան ճանապարհով։ Ա-
ելին կասենք. նոյն իսկ ամենազօրեղ բնաւորու-
իւն ունեցող մարդը իր սեփական կամքի օգնու-
եամբ երբէք չի իրացնի այն առանձնայատկութիւն-
երը, որ երեխան իրացնում է առանց որևէ դժւա-
ութեան։ Այդ ճանապարհով դեռ ծծկեր մանուկը ըն-
ելանում է կերակուր ուտելու կարգ ու կանոնին, իսկ
աւելի մեծ երեխաները՝ մաքրասիրութեանը, չափաւո-
ութեանը կեր ու խումի մէջ և այլն։

Կեանքի առաջին օրից պէտք է ընտելացնեք երեխային միայն յայտնի, նշանակուած ժամերին կերակրուելու և գիշերը հանգիստ քնելու։ Այս կանոնին ընդդիմանալով և եթէ հետևող մայրը ոչ միայն կը թեթևացնի մայրութեան ծանր պարտականութիւնները, այլ և մեծ ժամանակ երեխայի կրթութեան անխախտելի հիմունքը դնի, որովհետև կը պահպանի նրան ագահութիւնից, կը սովորեցնի իսկական սովածութեան զգացմունքը զանազանել։ Այդպէս առաջնորդուած երեխան չափազանց աւելի չի ուտի, այլ միայն այնքան, որքան անհրաժեշտ է սովածութիւնը յագեցնելու համար։ Երեխան մեծանալով՝ պէտք է աւելի սակաւ անգամ նրան կերակրել, մինչև որ վերջապէս կը հասնենք կանոնաւոր թիւին, մօտաւորապէս օրեկան հինգ անգամին։ Սակայն սկզբունքը խախտելով, ոչ թէ նշանակած ժամերին, այլ մեծերի ցանկացած միջոցներին կերակուր տալով մանուկին դարձնում ենք ագահ և աչքածակ և դրդում է նրան, որ ուտի պահանջի անժամանակ, իսկ սրանից առաջանում է մարսողութեան անկանոնութիւն և տրիրութիւն։

Նոյնպէս առաջին օրուանից անհրաժեշտ է ընտելացնել երեխային՝ գիշերով առանց լոյսի քնելու։ Գիշերուան լամպին սովոր երեխաները վերջը վախենում մութ տեղ քնելուց։ Երեխային օրօրելն ու ճօճելով քնեցնելու ժամանակ վրան երգելը պապական ժամանակների անպէտք մնացորդներն են, և առանց այդ ամենի երեխաները շատ լաւ կարող են գիմանալ։ Իբր այդ ամենքը երեխաների աչքերին քուն է բերում

այլ չէ՞ որ օրօրելը երեխայի վրա պէտք է հէնց այնպէս ներգործի, ինչպէս օրինակ՝ ճօճանակը կամ ուղղանացութիւնը, որ շատ և շատ հասակաւորների վրա աւելի քան անախորժ է ներգործում։ Օրօրելը միայն թմրեցնում է ծծկերին և այդ թմրութիւնն է, որ երեխան քնում է, իսկ այնտեղ, որտեղ սովորութիւն չը կայ օրօրելու, երեխան առանց այդ էլ շատ աւելի շուտով է քուն մտնում։ Երբ մտաբերում ենք թէ ինչպէս սաստիկ են օրօրում և ինչպէս աղաղալի ձայնով են երգում ծծմայրերը, կամենալով չը թողող մանուկին քնեցնել անկասկած առաջնութիւնը կիտի տանք անշարժ անկողնիկին և հանդարտ ննջերակին։ Ննջող մանուկի լացն ու անհանգստութիւնը կաթուն են առաջ գալ բոլորովին ուրիշ պատճառից, կարող են բողոք լինել օրօրելու և երգելու դէմ կամ տկարութիւն կամ անյարմար փաթաթուածքի հետևանք։

Աւելի մեծ երեխաներին պէտք է մէկ անգամից ընտելացնել կողքի վրա պառկելու անկողնիկի մէջ՝ ձեռները վերմակի վրա դուրս պահելով։ Այսպէս սովորած երեխան վերջը չի կարողանայ քնել ձեռները վերմակի տակ ունենալով, որովհետև արիւնի շրջանառութիւնը կը դժուարացնի։ Իսկ եթէ երեխային սկսենք միայն հինգ տարեկան հասակից կամ աւելի ուշ ընտելացնել ձեռները այդպէս պահելու, ապա անգիտակցօրէն քնի մէջ ձեռները չի տանի վերմակի տակ, իսկ յայտնի է թէ որչափ ճնասակար հետևանքներ է ունենում այս սովարութիւնը աւելի ուշ երեխայի կեանքում և ինչպէս նոյն իսկ պատճառ է դառ-

նում շատ կորստաբեր արարմունքների։

Այստեղ պէտք է կանգ առնենք այն բանի վրա, որ մանուկները սկսում յաճախ են թաց անում անկող-նում։ Աւելի ուշ մանուկը սկսում է տիրապետել միզամուղ մկաններին, ուստի մեծերի պարտականութիւնն է օգնել նրան, որ շուտով սովորի կառավարել այդ մկանները։ Անփութութիւնը այս բանում երեխաների շատ ծանր է նստում, և յաճախ մինչև 9-ը—10-ը տարեկան հասակը նրանք ստիպված են լինում յամառութեամբ մաքառել իրենց կամքին չենթարկուող այդ մկանների դէմ, իսկ համապատասխան հսկողութիւն ու ժամանակին ընտելացումը հէնց սկզբից այդ թերութեան առաջն կառնէր։ Երեխային երեկոյեան քիչ խմեցնելով, հակելով որ բնական պէտքերը կատարի քնելուց առաջ, գիշերւայ մէջ արթնացնելով — ահա ինչ միջոցներով կարող ենք այդ պակասութեան առաջ առնել։ Այդ կողմից անխնամ թողած երեխաների վրա շատ էլ չեն ներգործում ամաչացնելն ու նոյն իսկ ա-մենախիստ պատիժները, այն ժամանակն էլ հարկաւոր կը լինի դիմել վերև յիշած միջոցներին, բայց որոնց հետև մոռանալ առհասարակ աւելի դժուար է քան թէ ընտելանալը, ուստի այդ դէպքում բժշկութիւնը շատ աւելի երկար պիտի տևի։

Յայտնի է թէ որչափ կարևոր է շարժողութիւնը ու թարմ օդը երիտասարդ սերունդի առողջութեան և աշխուժութեան համար. ուրեմն՝ հէնց ամենավաղ հասակից պէտք է սովորեցնենք նրանց թարմ օդի մեջ մնալու։ Թէև մենք հակամիտ չենք որ երեխաների

ինչ էլ որ լինի, առանց այլևայլութեան դիմացկունութեան վարժեցնենք և խորհուրդ չենք տալիս զբօսնելու դուրս տանել փոքրիկներին կամ մի քիչ մեծերին ձմեռայ բուքին, հիւսիսային ցուրտ քամուն կամ սաստիկ անձրևին, սակայն անհիմն ենք համարում երեխաներին տանը պահել քիչ թէ շատ տանելի, թեկուզ և ոչ այնքան էլ լաւ եղանակին։

Նոյնպէս հետզհետէ ընտելացնելով կարելի է երեխային մաքրասէր դարձնել։ Պէտք է սովորութիւն անել որ քնելուց առաջ և անկողնից վեր կենալուց յետոյ անմիջապէս երեսը լանայ, նոյնպէս լացի ճաշից առաջ և յետոյ և առհասարակ երբ ձեռները կամ երեսը կեղտոտել է։ Քանի աւելի շուտ երեխան ինքը կը կարողանայ այս ամենը անել, այնքան աւելի լաւ։ Ցամենայն դէպս արդէն հինգ տարեկան երեխան պիտի առանց ուրիշի օգնութեան կառավարի. միայն թէ պէտք է նրան տալ հասակին համապատասխան լացարան և սովորեցնել թէ ինչպէս պէտք է ինքը լացի։ Մանուկներից շատ շատերի անշնորհքութիւնը լացելու մէջ առաջ է գալիս նրանից, որ մեծերը չափազանց են մտածում իրենց հանգստութեան մասին և գերադասում են իրենք լանան երեխային, քան թէ նրա գլխին կանգնեն սովորեցնեն և հսկեն, որ ինչպէս հարկն է կատարի այս գործողութիւնը։ Անկասկած, մեծերի համար այդ ամենից յարմար է, բայց երեխաներին ոչ մի օգուտ չի բերում։

Շատ վաղ նոյնպէս պէտք է երեխային սովորեցնենք կարգապահ լինելու, կարգին պահելու իր խաղալիք-

ները և վերջը՝ նաև՛ իր շորերը։ Փոքրիկ մանուկը ար-
դէն պէտք է ունենայ իր սեփական արկղը, պահարան,
կօմօդը կամ որևէ անկիւն, որտեղ նա կարող է դարսել
իր սեփական իրերը, այնպէս որ միշտ գիտենայ թէ
որտեղ պէտք է դարսի։ Հէնց սկզբից այս կարգ ու կա-
նոնին չընտելացած երեխաները վերջը շատ դժուար են
ընտելանում։ Կարգապահութիւնը ամէն մարդու հա-
մար սաստիկ կարևոր յատկութիւն է. ամենք լաւ են
հասկանում որ այս յատկութիւնը շատ է թեթևացնում
և կարճացնում ամէն գործունէութիւն, և հասակաւոր
մարդկանցից քանիսը ստիպված են լինում միմիայն
նրա համար մաքառել իրենց անկարգութեան դէմ, որ
փոքրուց ընտելացած չեն եղել կարգապահութեանը։
Հնուց յայտնի է որ շատ բան է վաստակում նա, ով որ
մէկ անգամից ընտելացնում է երեխաներին որ իրենց
գործերի մէջ նոյն կանոններով ղեկավարուեն, ինչ կանոն-
ներն որ իրանց ապագայ գործունէութեան օրէնքներ-
են լինելու։ Որ այդպէս է, թող երեխաները ոչ մի այն-
պիսի սովորութիւն չիւրացնեն, որից պէտք է վեր-
ջը ետ կենան։ Ուրեմն ազատենք նրանց ետ կենալու-
այսինքն՝ այն պակասութիւններն և արատները մոռա-
նալու դժուար գործից, որոնք գրեթէ նրանց երկրորդ
բնութիւնն են դառնում։

«Կամենալով կենդանիներին մեզ ծառայելու ըն-
տելացնել շատ. վաղ ենք սկսում նրանց վարժեցնել։
Այս դէպքում շատ խելացի ենք վարուում. ապա ինչ-
ենք այս բանը արհամարհում երեխաներին կրթելիս
Չէ՞ որ առհասարակ առաջուց փչացնում ենք նրանց

խաբելով մեզ այնպիսով թէ ոչինչ, իրենք իրենց ժա-
մանակով կուղղուեն և լաւ մարդ դուրս կը գան»։ Այս-
պէս էր ասում անգլիացի իմաստասէր Լօկկը դեռ եր-
կու հարիւր տարի մեզանից առաջ, և աւաղ, նրա խօս-
քերը մինչև հիմա էլ ունեն իրանց նշանակութիւնը։
Բայց եթէ ընտելացումը այդպիսի մեծ դեր է խաղում
երեխայի կրթութեան գործում, ոչ պակաս կարևոր է
օրինակը, քանի որ ամէն մարդուն իրենէ յատուկ է
ձգտել ուրիշին հետևելու և ուրիշին նմանուելու։

ՕՐԻՆԱԿ

Նմանուելու ձգտումը։—Մեր օրինակը։—Մեծերի օրինակը։—Վատ օրինակի առաջն առնելը։—Հասակակիցների ընկերութիւնը։—Հըսկողութիւնը։

Վերև բերած յատկութիւնները պատուաստում ենք
երեխաներին առանց՝ օրինակ ծառայելու. բայց աւելի
բարձր կարգի յատկութիւնները երբէք չենք ներշնչի
երեխաներին, եթէ մենք ինքներս այդ բանում նրանց
համար օրինակ չը ծառայենք։ Եթէ օրինակ՝ նոյն իսկ հա-
զար անգամ կրկնելու լինենք մանուկին՝ «ձայնդ չափա-
զանց մի բարձրացրու, սիրալիր եղիր, ուղիղ նստիր, մի
օրօրուիր աթոռի վրա, աղքատներին ողորմիր, և այլն և
այլն», իսկ մանուկը տեսնի որ մենք ինքներս վար-
ւում ենք մեր պատուէրների հակառակ, կարող ենք հա-
ստատած լինել որ մեր խօսքերը ոչ մի ազդեցութիւն

չեն անի նրա վրա։ Թանձրացեալ օրինակը աւելի է ա-
սում մանկական հոգուն, քան թէ ամեն տեսակ խրատներ
և դատողութիւններ, որոնք նրա հասար միմիայն դա-
տողութիւններ են և այլ ևս ոչինչ։

Ուրիշ կերպ էլ չի կարող լինել, քանի որ նման-
ւելու ձգտումը աւելի ուժեղ է երեխայի մէջ, քան թէ
բանականութիւնը և դեռ թոյլ կամքը։ Ի՞նչպէս կարող
ենք պահանջել որ երեխան ուրիշ կերպ վարւի, քան
թէ մենք, որոնց հետ նա կապած է սիրոյ և ակնա-
ծութեան կապերով, որոնց վրա նա նայում է որպէս
իրենից աւելի բարձր և աւելի կատարեալ էակների
վրա։ Երախայի համար սովորական և մարմնացած օ-
րէնքը մեր վարողութիւնն է։

Երեխան այնպէս ման կը գայ և կը շարժւի, այն-
պէս կը յօրանջի և փրշտայ, այնպէս բարձրաձայն կամ
կամաց կը խօսի, ինչպէս մենք։ Բայց այս դեռ բա-
ւական չէ. նա մեզ նման քաղաքավարի կամ կոպիտ
կը խօսի ծառաների և մեծերի հետ, հէնց այնպէս ողոր-
մած և կարեկից կը լինի աղքատներին և թշուառներին,
որպէս մայրն և դաստիարակները։

Ցոյց տանք որ ամեն տեսակէտից կատարեալ ը-
տանիք ենք, որ մեր մէջ սիրան ու բանականութիւնը
մի լիակատար ներդաշնակութիւն են կազմում, որ ան-
ձնական շահը սերտ կապուած ենք լայն մարդասիրու-
թեան հետ, որ գիտենք մարդկանց հետ վարւել, սիրա-
լիր, պատրաստակամ, անձնանուէր ու ընկերասէր լինել,
որ ազատ ենք հասարակական նախապաշարմունքներից,
—անկասկած երեխան էլ կը իւրացնի միևնոյն յատկու-

թիւններն և ձեռք չի բերի այն թերութիւնները, որոնք
անշուշտ բաժին պիտի դառնան այն երեխային, որ մե-
ծացել է մի այնպիսի ընտանիքում, ուր կարելի է
տեսնել միմիայն վերև բերած յատկութիւններին հա-
կառակ յատկութիւններ։ Ամենայն իրաւամբ կարող
ենք ասել մանաւանդ մեր աչքի առաջ ունեցած հասա-
կի համար թէ՝ «ինչպէս որ ծնողներն են, այնպէս էլ
նրանց որդիքն են»։

Օրինակի զօրութիւնը նկատւում է շրջապատող-
ների ամեն տեսակ ազդեցութիւնների մէջ։ Այսպէս,
այն ընտանիքներում, որտեղ փոթորիկը մի բնական,
սովորական երևոյթ է համարւում, ոչ ահ, ոչ սար-
սափ է առաջացնում, երեխաները ոչ մի ուշադրութիւն
չեն դարձնում նրա վրա. ընդհակառակը՝ եթէ բնական
այդ երևոյթը անյաղթելի անհանգստութիւն է առաջաց-
նում մայրիկի կամ տատիկի մէջ, ահն ու սարսափը բուն
են դնում երեխայի սրտում։ Նոյն իսկ օտար զաւակներ,
պատանիներ՝ այնպիսի ծնողների որդիք, որոնք այդ նեար-
դային հիւանդութիւնը չունեն, ձեռք են բերում այդ
պախարակելի երկչոտութիւնը, եթէ մեծանում են մի
դերդաստանում, ուր վախենում են փոթորկից։ Ասել է
թէ՝ ահագին է օրինակի զօրութիւնը, քանի որ նա կա-
ղանում է փոփոխել, յեղաշրջել, այլակերպել նոյն
իսկ հարազատ ծնողներից ժառանգած յատկութիւն-
ները։

Նմանողութեան ձգտումը յատուկ է նաև տա-
ռին կարգի կենդանիներին, բայց ոչ մէկի մէջ նա այն
սաստիճան խոր և լայնածաւալ չէ, ինչպէս մարդու մէջ։

կրթական արհեստը դեռ չէ դուրս բերել այդ օրէնքի
այն բոլոր եզրափակութիւնները, որոնցից կարելի կ
լինէր օգուտ քաղել աճող սերունդը կատարելագործ
ու համար։

Այսպէս ահա օրինակի օգնութեամբ երեխան կը
թուում է և նմանւում շրջապատող մարդկանց, գլխա
որապէս նիստ ու կացի, վարուողութեան կողմից։ Բայ
շրջապատի օրինակը քիչ չէ ազդում նաև նրա մտաւ
աշխարհի վրա։ Չէ՞ որ այս հասակում մանուկը մտա
որապէս զարգանալու աւելի շատ դրդիչներ է ստա
նում իր հասակակիցներից, քանի որ աւելի հեշտ
հասկանում նրանց գործողութիւններն ու զգացմուն
քները, քան թէ հասակաւորների աւելի բարդ և բա
մազան գործունէութիւնը։ Այդ է պատճառը որ փոք
երեխաները սիրում են հետևել մեծ երեխաների օրի
նակին, որոնց մարմնի շարժումները աւելի հեշտ
կարողանում մէկ ակնարկով ընդգրկել, իսկ մտքերն
զգացմունքները՝ աւելի հեշտ հասկանալ։ Այդ է պատ
ճառը՝ որ երեխաները աւելի շատ բան են սովորում
րենց հասակակիցներից, քան թէ հասակաւոր մարդ
կանցից, բայց և ամենամեծ դիւրութեամբ իւրա
նում են նրանցից նաև ամեն տեսակ պակասութիւն
ներ և արատներ։

Առանձնակի մեծացած երեխաները աւելի դա
դաղ են զարգանում մտաւորապէս, որովհետև նրան
պակասում է գլխաւոր դրդիչը, այն է՝ հասակակիցն
րի օրինակը, որ նոյնքան անհրաժեշտ է նրանց հոգ
կան զարգացման համար, որքան հացն ու ջուրը, ո

քան օդն ու շարժողութիւնը նրանց առողջութեան և
ֆիզիքական աճման համար։ Դրանից է որ միանգամայն
կամ ընտանիքի ուրիշ երեխաներից շատ աւելի մեծ զա-
ւակի կրթութիւնը յաճախ միակողմանի է լինում։ Ծը-
նողները, նոյն իսկ ամենալաւ ծնողները չեն լցնի՝ ինչքան
էլ սիրեն և գուրգուրեն որդուն, այն բազմաթիւ հոգեկան
վայելքների և բազմակողմանի դրդիչների տեղը,
որոնք երեխայի միտքն ու կամքն են կազմակերպում և
կատարելագործում և որոնք ստացւում են միմիայն
հասակակիցների ընկերութիւնից։ Ուրեմն՝ իրենց երե-
խայի մտաւոր զարգացման մասին հոգ տանող ծնող-
ները պէտք է նրան ժամանակ առ ժամանակ մտցնեն
հասակակիցների ընկերութեան մէջ, պէտք է մի կողմ
թողնեն դասակարգային նախապաշարմունքները և
պէտք է թոյլ տան իրենց երեխաներին շփւել ու խա-
ղալ նոյն իսկ հասարակական դասակարգութեան մէջ
ցածը կանգնած ընտանիքի երեխայի հետ։

Իհարկէ այս բանը նրանք կարող են անել հա-
մապատասխան հսկողութիւն սահմանելով, չը վախե-
նալով որ երեխան կը փչանայ, որովհետև աղքատ
դասակարգի երեխաները այդ հասակում դեռ փչացած և
ընկած չ[illegible] լինում։ Այս ճանապարհով երեխան մանկա-
[illegible] շատ կ[illegible] սրտից կը վանի եսականութեան սաղմերը։
[illegible] ճիշտ [illegible] ահագին բարոյական օգուտ է ստանալու
[illegible] ահագին բարոյական օգուտ։ Հասակակից-
նա, բայց և ոչ պակաս մտաւոր օգուտ։ Հասակակից-
ների ընկերութեան մէջ երեխան բոլորովին իր բնա-
կան տարերքի մէջ է, որովհետև մանկական աշխարհը
մի առանձին աշխարհ է։ նրա մտքերն ու գործերը մեծ

մասամբ նմանողութիւն՝ են մեծերի մտքերին ու գործերին, միայն թէ խաղի ձևով, ինչպէս մենք մի քիչ ներքև կը տեսնենք։

ՄՏՔԻ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Մտաւոր զարգացումը։—Զգայարանները։—Ըմբռնութիւնը։—Պատմութիւն, զրոյցներ։—Նրանց ազդեցութիւնը։—Ընդունակութիւնները։—Պատկերն և նկարները։—Բռնութեան դիտողութիւնները։

Մանուկն աշխարհ է գալիս դեռ ոչ լիովին զարգացած, թէ ֆիզիքապէս և թէ հոգեպէս, և նրա գոյութեան ամբողջ առաջին տարին անընդհատ շարունակւում է այդ զարգացումը։ Նա ունենում է զգայարանները, բայց այդ զգայարանները դեռ ընդունակ չեն բոլորովին պարզ և անխառն տպաւորութիւններ ստանալու շրջապատող աշխարհից։ Ունենում է ձեռներ ու ոտներ, բայց պէտք է դեռ սովորի ձեռներով բռնել, իսկ ոտներով մարդ գալ։ ունենում է թոքեր և ամբողջ խօսակցական գործարան, բայց դեռ չի կարողանում խօսել։ Նա դեռ չի ունենում բաւականին [illegible] այնքան օդ ներշնչելու և արտաշնչելու, ինչքան [illegible] որ է հնչիւններ և բառեր արտասանելու [illegible] մասածենք՝ ինչ պիտի մեզ ասէր։ Ա[illegible]ը աւելի դա[illegible] բաթները լսողութեան գործարանը բոլորովին հետև նրան է, որովհետև ականջի թմբուկը [illegible] հասակակիցնե[illegible] ուղղութիւնից ընդունում է ուղղ[illegible] ուղղութիւն։ Մանուկի աչքերին բոլոր իրերը երևում են կարծես

տեսակ հեռաւորութեան վրա, մէկ հարթանկարի էջ։ Այդ պատճառով մանկական կեանքի առաջին օրերում ոչ մի խօսք չէ կարող լինել կրթութեան մասին. ծծկերի ամբողջ գործունէութիւնը սահմանափակւում է միայն քնելով և սնունդ առնելով։

Այսպէս ուրեմն ծծկերի թոյլ միտքը այդ առաջին շրջանում շատ դանդաղ է զարգանում, և միայն այդ շրջանի վերջում զանազան դէմքից և ուրախ հայեացքից նկատւում է որ աւելի է հետաքրքրւում շրջապատող առարկաներով։ Սակայն մանուկը դեռ դժուարութեամբ զանազանում մէկ իրը միւսից. այդ է պատճառը, որ հետաքրքրութեամբ նայում է շարունակ միևնոյն իրի վրա, որը նրա ուշքը գրաւել է, թէկուզ շատ անգամ էլ տեսած լինի այդ իրը։

Երկրորդ տարին նրա մտքի զարգացումը աւելի դառնում նկատելի. այդ ժամանակ նա ոչ միայն աւելի հեշտութեամբ է իրերը ճանաչում, այլ և սկսում որոշ եզրակացութիւններ անել։ Ուրախանում է, երբ [illegible] գդակ են ծածկում կամ առջևը դնում ենք փուչ[illegible] ամանը, որովհետև յիշում է թէ մինչև այդ միշտ [illegible] ոտներից յետոյ նրան զբօսնելու են դուրս տարել [illegible] կուշտ կերակրել են։ Նրա եզրափակութիւնները [illegible] ճիշտ չեն լինում. այսպէս օրինակ՝ տեսնելով [illegible] նրա դնչին մօտեցնում է գդալով կաթը, [illegible] նա, բայց [illegible] դառնում կին խոտ են տալիս, [illegible] ների ընկերու[illegible] դէմ է անում ճնճղուկին, [illegible] ճնճղուկն էլ գագրուկի պէս իր մատ կը[illegible] [illegible]ելով այս ամենին՝ նոյն իսկ այդ

սխալները վկայում են որ նրա մտաւոր գործունէութիւնը զարթնել է։

Յաջորդ տարիներում մտաւոր առաջադիմութիւնը ընթանում է արդէն անընդհատ, և նոյն իսկ արած սխալները նպաստում են մանկական մտքի աւելի կատարելագործելուն։

Քանի որ երեխան չէր խօսում, չենք կարողանում նրա մտաւոր զարգացումը ստուգել, և թէև դրանից առաջ էլ արդէն նա ծանօթ է լինում շատ մարդկանց և իրերի հետ, այնուամենայնիւ խօսել սովորելուց յետոյ միայն արագ քայլերով սկսում է մտաւորապէս առաջ գնալ։ Ահա այդ միջոցին մեծերի չափաւորուած և խելացի միջամտութիւնը կարող է շատ նպաստաւոր լինել մանկական բանականութեան աւելի արագ զարգացման համար։

Դրա համար առանձին ցուցմունքներ և խրատներ պէտք չեն, քանի որ առանց այդ էլ սովորական ընտանեկան գաստիարակութիւնն և տալիս այս կողմից ամեն պահանջներին։ Մայրը կամ դայեակը մանուկին զբաղեցնելիս և նրա մէջ հնազանդութիւնը վարժեցնելիս՝ պատիրում է նրան բերել և տանել զանազան իրեր և տալիս է այդ իրերի անունները։ Բայց որովհետև երեխան դեռ զանազանում է իրի ոչ թէ բոլոր յատկութիւնները, այլ միայն մի քանիսը՝ ուստի մայրը՝ իրի անունը տալիս, աստիճանաբար և աւելացնում նրա այս կամ այն առանձնայատկութիւնը։ Ոկզբում հրամայում է բերել գնդակ, ափսէ, [illegible] մատնոց և այլն, յետոյ արդէն մի քանի [illegible]

թիւններ է աւելացնում այս անունների վրա և պատիրում է բերել կարմիր գնդակը, փայտէ ձին, սպիտակ մատնոցը, այսպիսով ընտրում է նոր և նոր անձնայատկութիւններ և աստիճանաբար աւելացնում է հների վրա, մանուկի ուշադրութիւնը դարձնելով կլոր սպիտակ ափսէի, կարմիր փափկիկ գնդակի, դեղին կաւէ կուժի վրա և այլն։ Այսպէս խօսելով և խաղալով մեծերի հետ՝ մանուկը հարկադրուած է լինում նոր և նոր, առաջ չը նկատուած առանձնայատկութիւններ գտնելու։

Բացի դրանից, մանկական մտքի առաջադիմութեանը զարկ տուող ամենակարևոր միջոցներից մէկն են խաղալիքները (տես ներքև)։

Վաղուց արդէն նկատուած է որ մեծերի ընկերութեան մէջ լինող երեխաները աւելի արագ են զարգանում, քան իրենք իրենց կամքին թողածները, իսկ վերևում արդէն յիշեցինք որ հասակակիցների ընկերութիւնը ոչինչով չի կարելի փոխարինել, ասել է թէ երկուսպայմաններն էլ պէտք է միշտ աչքի առաջ ունենալ։ Ուղիղ է՝ մէկ տարեկան մանուկը աւելի է հակուած լինում մեծերի, քան թէ իր նման փոքրերի հետ ճաղու — այս առաջ է գալիս անշուշտ անօգնականութեան զգացմունքից, — այնուամենայնիւ նա էլ ուրախ-ուրախ ժպտում է, երբ տեսնում է իր նման փոքրիկին։ Այս անտարբերութիւնը դէպի հասակակիցները տևում է մօտաւորապէս մինչև երրորդ կամ չորրորդ տարեվերջը։ Այն ընտանիքներում, ուր աւելի շատ երեխաներ կան՝ տարիքով իրարից քիչ զանազանող, այս

համակրութիւնը դէպի հասակիցները աւելի վաղ է զարթնում։

Բացի մեծերի հետ խաղալուց և խօսելուց և բացի հասակակիցների ընկերութիւնից, մանուկների մտաւոր զարգացման համար ոչ պակաս խթան են հանդիսանում պատմութիւններն ու զրոյցները։ Մանկական արթնացող երևակայութիւնը օրէց օր աւելի սնունդ է պահանջում, և այդ է պատճառը, որ երեխաները այնպիսի հետաքրքրութեամբ ականջ են դնում մեծերին։ Զօդուել այդ միջոցից, չը պատմել մանուկներին հետաքրքրաշարժ զրոյցներ և պատմութիւններ—կը նշանակէր՝ հրաժարուել կրթական ամենակարևոր դործոններից մէկից. բայց պէտք է չը մոռանանք որ վատ արհեստաւորը նոյն իսկ լաւագոյն գործիքով ոչ մի օրինակելի բան գլուխ չի բերի։

Որպէս զի պատմութիւնը կամ հէքիաթը ընդարձակի երեխայի մտաւոր շրջահայեացողութիւնը, զարգացնի նրա սիրտը և կանոնաւորի երևակայութիւնը, որ առանց այն էլ սիրում է ցնորքներ և հրաշքներ, նա պէտք է իրական կեանքը նկարագրի և մի լաւ խբրատական և հետաքրքրաշարժ պատմութեան բոլոր առանձնայատկութիւնները ունենայ։ Թող երբէք երեխան այդ հասակում չը լսի մարդագէլների, ալքերի, չար կախարդների, քաջքերի, նախաքրիստոնէական ժամանակների այս ստեղծագործութիւնների մասին, որովհետև դրանք—մի կողմ թողնենք այդպիսի հէքիաթների յաճախ անբարոյական կամ անմիտ բովանդակութիւնը—մանուկի մէջ առաջացնում են սնահաւատութիւն, ե՛ր-

կչոտութիւն, նախապաշարմունք, թուլացնում են իրական աշխարհը ճանաչելու ձգտումը և ընտելացնում են երևակայութիւնը կիսաերազական ցնորքների մէջ ապրելու։ Չէ՞ որ առանց այդ էլ մանկական երևակայութիւնը, ինչպէս առաջ ասել ենք, մտաւոր ամենագործունեայ կարողութիւններից մէկն է. աւելի գըրգռել և արթնացնել նրան—կրակի վրա իւղ ածել կը լինէր։

Այդ կարողութիւնը կանոնաւոր գործադրութիւն կստանայ մանկական խաղերի մէջ։

Եւ վերջապէս՝ մի՞թէ իրական աշխարհը, որը դեռ այնչափ անծանօթ է երեխային, չի կարող հետաքրքրել և գրաւել նրա ամբողջ ուշադրութիւնը։ Մէկ աչք ձգեցէք օրինակ՝ ճանապարհորդական նկարագրութիւնների մէջ, և լիաձեռն կը կարողանաք հանել այնտեղից հետաքրքրաշարժ, գրաւիչ և խրատական նիւթեր։

Սրա մէջն են ամեն մանկական պատմութեան արժանաւորութիւնները։

Բայց այդ դեռ բաւական չէ. եթէ պատմութիւնը պիտի իրօք համապատասխանի իր նպատակին, պէտք է և համապատասխան անպաճոյճ ձև ունենայ, առանց այն արհեստական ոճաբանութեան, որը միայն դժուարացնում է բովանդակութեան հասկանալը։ Այս կողմից պէտք է դաս առնել գիւղական, շինական հէքիաթներից. «Կար չը կար՝ մի հարուստ մարդ կար. նա ունէր երեք որդի, մէկը բարի, միւս երկուսը չար և այլն»։ Ամենալաւ հէքիաթները պէտք է պատմել երեխաներին պարզ, հասկանալի, բովանդա-

կալից բառերով, առանց ճոռոմաբանական զարդարանք-
ների։ Եւ էլ շատ երկար չը պիտի լինեն, որպէս զի
չը յոգնեցնեն մանուկին։

Հետզհետէ կարելի է աւելի երկարացնել և աւելի
բարդացնել բովանդակութիւնը. բայց որքան կարելի
է՝ պէտք է խոյս տալ գրքից պատմութիւններ կարդա-
լուց, այլ աշխատելու է պատմել բերանացի, կենդա-
նի խօսքերով, որոնք աւելի պայծառ և աւելի խոր
տպաւորութիւն են թողնում մանուկի մտքի մէջ։

Այդ պատմութիւնները թւով շատ չը պէտք է լի-
նեն, և նոյն իսկ սխալւած կը լինէր նա, ով որ ամբողջ
տարւայ ընթացքում ամեն օր նոր և նոր պատմութիւն-
ներ կը պատմէր երեխային։ Երեխաները միևնոյն,
գուցէ նոյն իսկ աւելի մեծ հետաքրքրութեամբ ականջ
են դնում թէկուզ տասն անգամ լսած հէքիաթին և
զրոյցին և իսկոյն ուղղում են, եթէ պատմողն որև է ի-
րենց յայտնի մանրամասնութիւնը սխալմամբ ուրիշ
կերպ է պատմում կամ որևէ դէպք բաց է թողնում։

Լաւ է նոր զրոյց պատմելուց առաջ հարց ու փոր-
ձով ստուգել, թէ արդեօք երեխան հասկացել է նա-
խորդ պատմութիւնը, միայն թէ չը պէտք է դեռ այդ
հասակում պահանջել ճիշտ և մանրամասն պատասխան։
Թող մանուկը կրկնի իր լսած պատմութիւնը մէկ, շատ
շատ երկու անգամ, միւս օրը թող նոյնը անի. երեք
կամ չորս օր այսպէս կրկնելուց յետոյ երեխան ար-
դէն ինքը կը խնդրի որ թոյլ տաք՝ ինքը ասի սիրած
ոտանաւորը, զրոյցը և այլն։

Մայրերից շատերը, չափազանցրած զգաստ ու-

նենալով իրենց երեխաների ընդունակութեան մասին,
չեն կարողանում համբերել, մինչև որ գայ գրել-կար-
դալ սովորելու իսկական ժամանակը, և յաճախ դեռ
վեցերորդ տարին չը լրացած սկսում են գիր սովորե-
ցնել. շատերն էլ անագին ճիգ են թափում սովորեցնե-
լու թէ ինչպէս է ֆրանսերէն կամ գերմաներէն այս
կամ այն իրի անունը։ Եթէ ի նկատի առնենք թէ ու-
րախութեան և զարմութեան որքան բոպէներ են ի-
զուր խլում երեխաներից այդ չափազանց երկրայելի
գիտութեան համար, որքան դառնութիւն են տանում
թէ երեխան և թէ մայրը, այնպիսի՝ այդ պարապ-
մունքը պիտի վաղաժամ և ֆլատակար ճանաչենք՝ մա-
նուկի յետագայ զարգացման համար։ Ամեն բան իր
ժամանակն ունի ու իր յատուկ պայմանները։

Մանկական միտքը կրթող միջոցներից մէկն են
պատկերն ու նկարները։ Դեռ ևս փոքրիկ երեխայի մէջ
նկատւում է պատկերների սէրը, երբ նա մատիտով
թղթի վրա կամ քարեգրչով քարետախտակի վրա գը-
ծում է ամբողջ նկարներ և ինքն էլ հրճւում է իր մատ-
ների շնորհից։ Երեխաների ձեռքը սովորաբար տրւող
պատկերներն ու պատկերազարդ գրքերը շատ էլ չեն
նպաստում նրանց մտաւոր զարգացման, այլ աւելի շուտ
արգելք են հանդիսանում այդ բանին, քանի որ ընտե-
լացնում են նրան ցրւած լինելու։ Այդ նկարներն ու
գրքերը առհասարակ այն պակասութիւնն են ունենում,
որ մէկ անգամից պատկերացնում են չափազանց շատ
իրեր, որոնք ցրւում են երեխայի ուշադրութիւնը։ Ե-
րեխան ինչպէս հարկն է ոչ մէկը չի գննում, ոչ մի

բան լաւ չի ըմբռնում ու նոր և նոր տպաւորութիւններ-
ի ետևից ընկած՝ արագ անցնում է մէկ պատկերից
միւսին։ Նա դեռ ոչ մի գաղափար չունի հեռանկարի
մասին և տեսնում է օրինակ՝ երբեմն պատկերի առջևի
շարքում նկարուած շատ աւելի մեծ մարդ, քան թէ ե-
տևի շարքում նկարուած տնակն է, որը պէտք է նրա
համար իրրև բնակարան ծառայի։

Այսպիսի սխալ և թերի հասկացողութիւն-
ներ կարող է ստանալ երեխան նոյն իսկ լաւ նկարուած,
բայց վատ դասաւորուած պատկերից — էլ չենք ասում
վատ նկարուածների մասին, որոնք ոչ մի համաչափու-
թիւն չեն պահպանում առարկաների մէջ, օրինակ՝ ջայ-
լամը ներկայացնում են նոյն մեծութեամբ, ինչպէս և
աքաքաղը, իսկ արջը ներկում են նոյն գոյնով, որով
և գայլը։

Այնուամենայնիւ ինչպէս հարկն է գործադրուած
պատկերներն ու նկարները կարող են նպաստել մտա-
ւոր զարգացմանը։ Յայտնի է որ երեխաները երբեմն
դժուարութեամբ են դիտում իրական առարկաները։ Այն
երեխան, որը օրինակ՝ դիտում է մի բարձր տուն, ըն-
դարձակ շինութիւն, գեղեցիկ ձի, պէտք է իր հայեաց-
քը ուղղի մէկ վերև, մէկ ներքև, դարձնի մէկ աջ, մէկ
ձախ, շրջեցնի առարկայի եզրներով, մինչ դեռ պատ-
կերի վրա նա կարծես մէկ ակնարկով ընդգրկում է
առարկայի բոլոր կողմերը,—ահա թէ ինչու երեխանե-
րը այնպիսի սիրով են նայում պատկերները։

Ուրեմն որպէս զի մի կողմից բաւարարութիւն
տուած լինենք երեխայի սիրոյն դէպի պատկերները, և

միւս կողմից՝ պատկերները դարձրած լինենք մտաւոր
զարգացման միջոց, երեխաներին պէտք է տանք այն-
պիսի նկարներ, որոնք մէկ որոշ առարկայ են ներկա-
յացնում, բացատրենք երեխային, նրա ուշադրութիւնը
դարձնենք առարկայի այս կամ այն առանձնայատկու-
թեան վրա, մի խօսքով՝ պէտք է աշխատենք, որ երե-
խան չը բաւականանայ անմիտ զննութեամբ, այլ
ձգտի հասկանալ և առարկան։ Եւ որքան աւելի ճըշ-
գրիտ և իրականութեան հաւատարիմ պատկեր կը
տանք երեխաների ձեռքը, այնքան աւելի լաւ։

Սակայն մտաւոր կրթութեան ամենակարևոր մի-
ջոցներից մէկը կը լինի միշտ հէնց բնութեան դիտո-
ղութիւնը, և այս նպատակի համար պէտք է օգուտ
քաղենք զրօսանքներից, որ տեղի պիտի ունենան թէ
քաղաքում և թէ ձմեռ ժամանակ. պէտք է երեխայի ուշա-
դրութիւնը դարձնենք այս կամ այն մանրամասնութեան
վրա, որպէսզի նրա դիտողութիւնը լաւուած լինի. ա-
ւելորդ չի լինի ժամանակ առ ժամանակ հարցնել, թէ
ինչ է տեսել, և այս մեր հետաքրքրութիւնը դէպի նրա
տեսածը պիտի աւելի ևս խրախուսի նրան ուշադրու-
թեամբ վերաբերուելու շրջապատող իրերին։

Այս տեսակէտով պէտք է օգտուենք ամեն մի յար-
մար առիթից և պահանջենք որ երեխան կարճառօտ
պատմի մեզ թէ ինչ է տեսել զրօսանքի, ճանապար-
հորդութեան կամ հարևաններին այցելած ժամանակ։
Այսպիսի երեխան կը սովորի սեփական աչքերով դի-
տալ և սեփական գլխով մտածել։

ԽԱՂԵՐԸ

Ծակերի խաղերը։—Աւազ, տիկիններ, ուրիշ խաղալիքներ։—Կաղապարումը, խաղալիքների և խաղի նպատակը։—Ի՞նչպէս ընտելացնել աշխատանքի։

Ուրախութիւնը կարծես մի հոգեկան մթնոլորտ է, որի մէջ աճում են ամեն տեսակ բարի յատկութիւններ։ Ուրեմն պէտք է աշխատենք մանկական հոգին պահել այդ բարերար տրամադրութեան մէջ։ Բայց ուրախութիւնը, թէ հասակաւորների և թէ մանուկների կեանքում, կախւած է գործունէութիւնից, որը ուրախութեան հովանին է, իսկ անգործունէութիւնը նրա թշնամին է։ Ծակեր մանուկը՝ հետևելով գործունէութեան բնածին ձգտումին, արդէն օրօրոցում ձգում, շարժում է ոտիկները, ձեռները, ձայներ է հանում, ականջ է դնում իր հնչիւններին, բլբլացնում է, նայում է երկար այս կամ այն առարկային,—վառւող մոմին, ծաղկին, գնդակին, ժամացոյցի ճօճանակին,—և ամեն բան նրան յափշտակում է, ամեն բան զբաղեցնում է։ Իսկ երբ կը սովորի ձեռքով բռնել, նա առնում է ամեն առարկայ, որ իր ձեռքն են դնում, և եթէ կարողանում է՝ բերանն է տանում, մասամբ դուրս եկող ատամների պահանջներին բաւարարութիւն տալու, մասամբ էլ այդ առարկայի հետ աւելի լաւ ծանօթանալու համար։

Արդէն առաջին տարւայ վերջում կանոնաւոր զարգացած երեխան ժամերով զբաղւում է իր անկողնիկի

վրա դրւած խաղալիքները դիտելով։ Բայց հէնց որ սկսում է ման գալ, նրա ամենամեծ զւարճութիւնն է դէս ու դէն շպրտել խաղալիքները. այդ բանը նրան ահագին ուրախութիւն է պատճառում, որովհետև նա համոզւում է իր ուժի մէջ։

Հետևենք երեխային, որը՝ յատակին նստած՝ իր խաղալիքների հետ է ընկած. նա մէկ առարկան միւսի ետևից վերցնում է, ձեռք է քսում վրան, շօշափում է, կարծես կամենում է աւելի լաւ հասկանալ, և ապա մի կողմն է շպրտում, մէկ ուրիշը առնում, որի հետ նոյն տեսակ է վարւում. յետոյ մէկ էլ սողում է դէպի առաջին առարկան, և այլն, և այլն։ Նրա դէմքի լուրջ արտայատութիւնը ցոյց է տալիս, որ արդէն մի ինչ որ միտք սկսել է զբաղեցնել նրա ուղեղը։ Ուրախ տրամադրութեան մէջ (որ սովորաբար տեղի է ունենում երեկոները, երբ սենեակում ճրագ են վառում), երեխան դայեակի գրկում ոտներն ու ձեռները ձգձգում է, վերվեր է թռչում, և կենդանական ուժի շատութիւնից դեսի է շպրտում, ինչ որ ձեռքն է ընկնում, և քանի ատին է շպրտում, այնքան աւելի է ուրախանում։ Այստեղ խաղը դառնում է երբեմն քմահաճութիւն, բայց նետումը, որ այդ հասակի մանկական խաղի գլխաւոր բնաւորութիւնն է կազմում, արդէն սկզբնապատակեր է բազմաթիւ խաղերի, որ յատուկ են յաջորդ, աւելի մեծ հասակին։ Եւ իրաւ, ինչ է գնդակի, չիլիկի խաղը, նոյն իսկ մանկական հրացանաձգութիւնը, եթէ ոչ նետում։

Բացի նետումից, երեխաներին ամենամեծ վայելք են պատճառում այնպիսի իրեր, որոնք հեշտ են իրենց

ձևը փոփոխում, օրինակ՝ թուղթը, աւազը, նոյն իսկ ջուրը։ Ծալելով թուղթը, տալով նրան տարբեր, երբեմն նոյն իսկ անճոռնի ձևեր, երեխան նոյնպէս հասկանում է իր ուժեղ լինելու մէջ. այդ պատճառով է, որ նա նոյնպէս սիրում է չփչփացնել ջրի մէջ, քանի որ այս նիւթը աւելի քիչ ջանք է պահանջում նրանից։

Սակայն մանուկների համար, մինչև երեք տարեկան հասակը, ամենալաւ նիւթն է աւազը։ Աւազից՝ բաժակի, գաւաթի, տուփի օգնութեամբ երեխան կարողանում է շինել ամեն տեսակ ձևեր, և հասկացողութիւն է կազմում մեծութեան և փոքրութեան, բարձրութիւնների և ցածրութիւնների մասին և այլն. ձեռքի մի հարուածով կարող է ոչնչացնել և հաւասարեցնել դիզած սարերն ու նորից դիզել։ Ուրեմն նեռուվից յետոյ, փոքրերի ամենասիրած զբաղմունքն է շինածը քանդել։ Նրանց աւելի է զուարճացնում՝ դայեակի ձեռքով ահագին հմտութեամբ և համբերութեամբ շինած թղթէ խաղատնակի մէկ անգամից ցրիւ անելը, քան թէ՝ նայել թէ ինչպէս է կամաց-կամաց շինւում այդ տնակը և նրանց աւելի զարճացնում է, աղիւսակներից կառուցած պալատի քանդելը, քան թէ ինքը պալատը։

Երեխան միայն այն ժամանակն է սկսում կառուցանելով զարճանալ, երբ կարողանում է ինքը կառուցանել։ Նորից չոր աւազը նրա ձեռքին դառնում է և կաթ, և ջուր, և ամեն տեսակ կերակուր, որով նա լցնում է իր ամանները, ափսէները, պնակները, տառները և մեծարում է իր հիւրերին, իր տիկիններին։ Այս նիւթը հնուց համարւում է ամենայարմարը փոքր մանուկների համար, բայց չը նայած այդ բանին՝ շատ ընտանիքներում արգելում են մանուկներին աւազով խաղալ, վախենալով այն անկարգութիւնից, որ այդ զբաղմունքը առաջ է բերում տան մէջ։ Այս առարկութիւնը հիմնաւոր չէ, որովհետև նախ մենք պէտք է աչքի առաջ ունենանք մանուկի հոգեկան օգուտը և յետոյ միայն մեր յարմարութիւնը. վերջապէս՝ տեղաւորելով աւազը տափակ և ընդարձակ արկղի մէջ, կը կարողանայինք յայտնի չափով այդ անկարգութեան առաջն առնել։ Երեխան գիտէ ժամերով զբաղուել աւազով, առանց կողմնակի օգնութեան, և ով որ հասկանում է որ ինքնուրոյն զբաղմունքը նոյնքան մեծ նշանակութիւն ունի, որքան և ինքնուրոյն աշխատանքը աւելի ուշ հասակում, նա մատների միջով կը նայի այն փոքրիկ անյարմարութիւններին, որ այդ զբաղմունքից առաջ են գալիս։

Հէնց որ երեխան վարժուել է ման գալու, նրան պէտք է տալ այնպիսի խաղալիքներ, որոնք երեխային հարկադրում են տեղից շարժուել և մշտական գործունէութեան մէջ են դնում նրան.—ուրեմն գնդակը, ձին, փայտէ կառքը այդ ժամանակ միանգամայն համապատասխան խաղալիքներ են։ Կառքով փոքրիկը տեղափոխում է իր սեփականութիւնը սենեակի մէկ անկիւնից միւսը և մեծ ճանապարհորդութիւններ է կատարում սեղանի և աթոռների շուրջը։ Այս պէտքում աւազը նորից ամենասիրելի ապրանքն է հանդիսանում։ Երեխան աւազը նասիրելի ապրանքն է հանդիսանում։ Երեխան աւազը նաստում է պարկերի մէջ, բարձում է իր սայլակը և նոստում է պարկերի մէջ, բարձում է իր սայլակը և նոստում

րից վայր բերում. գնում է իր տիկիններին հետ այցելութեան, երկար և դժուար ճանապարհորդութիւնից յետոյ վերադառնում է տուն և այլն։ Այս խաղալիքները միատեսակ զբաղեցնում են՝ թէ տղաներին և թէ աղջիկներին. միայն աղջիկները գերադասում են աւելի տիկիններ, իսկ տղաները ձիեր։ Տիկինը քոյրիկի աչքում բոլորովին նոյն տեղն է բռնում, ինչ որ եղբօր աչքում ձին։ Ձին աքացի է տալիս, գժութիւն է անում, պահանջում է, որ իրեն շոյեն, սպառնան կամ խնդրեն. նոյնպէս և տիկինը միշտ չի հնազանդւում քոյրիկի հրամանին, հարկաւոր է լինում նրան յիշեցնել, պատժել, խնամել և այլն, և թէ մէկին, թէ միւսին՝ պէտք է կերակրել, խրատացնել և հանգիստ տալ։ Այսպէս երեխաները խաղալով, ընդարձակում, պարզում և աւելի ամրապնդում են իրենց հասկացողութիւնների շրջանը. այսպէս՝ խաղը գործ է տալիս մտաւոր կարողութեանը, այսինքն՝ վարժեցնում է մտաւոր եռանդը։

Այդօրուանից, արդէն ճարտարապետական արկղիկն իր աղիւսակներով էլ չի լինի նրա համար լոկ փայտէ կտորների հաւաքածու, այլ կը դառնայ մի ցանկալի նիւթ, որի օգնութեամբ նա կսկսի կառուցանել տներ և պալատներ, շինել կամուրջներ և դիզել թմբեր. այժմ հասած կը լինի այն բոպէն, երբ կարելի կը լինի երեխայի ձեռքը տալ Ֆրեօբելի նուէրներից մէկը, կամ միւսը։ Միւսիոնների (մոզայիկների) տուփից նա կրկազմի զանազան զարդեր և հասկացողթիւն կը ստանայ գոյների և անծանօթ ձևերի մասին։։

Զոդիկներից կը կազմի քառակուսիներ, աստղեր,

տնակներ, իսկ սիսեռի կամ շագանակի կտորների օգնութեամբ կը շինի աթոռներ, սեղաններ, մահճակալներ։ Մանուկը կսկսի հիւսել գորգեր գոյնզգոյն թղթից, իսկ հասարակ թղթից շինել տուփ, մակոյկ, ծիտ և այլն։

Շատ ցանկալի է նոյնպէս որ երեխաները ընդօրինակեն առարկաներ բնականից, օրինակ՝ ծեփեն թռչնակ, շնիկ, կատուիկ։ Այս նպատակի համար ամենայարմարն է կաւը. սրանից նա կարող է ահագին օգուտ ստանալ, ընտելանալով ինչպէս հարկն է՝ դիտել և զննել առարկաները։ Չէ՞ որ ցանկանալով թռչնակ կամ շնիկ ծեփել ըստ տուած օրինակի՝ նա ստիպած պիտի լինի ուշադրութիւն դարձնել այդ առարկաների բոլոր յատկութիւնների վրա։

Ֆրեօբելեան մանկապարտէզների խաղերից *), մենք դիտմամբ բաց ենք թողնում բզով ծակծկելը և մենք դիտմամբ բաց ենք թողնում բզով ծակծկելը և ուրիշ այս տեսակները, որոնք պահանջում են տեսողութեան սաստիկ լարում, բայց դրա փոխարէն յանձնաբարում ենք գունաւոր թելերով կարելը հասարակ թղթի վրա։ Այսպէս տեսնում ենք որ խաղը հետզհետէ դառնում է աշխատանք, իսկ որովհետև այս երկու տեսակ զբաղմունքների մէջ գլխաւոր տարբերութիւնը այն է, որ խաղը մի գործողութիւն է առանց որևէ կողմնակի նպատակի, իսկ աշխատանքը միշտ ունենում

---

*) Տես «Մանկական պարտէզ»—Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի, 1905 թ. Թիֆլիս։

է որևէ որոշ նպատակ աչքի առաջ, ուստի պէտք է աշխատել որ երեխան հասկանայ թէ ինչի համար պէտք կը գայ իր ձեռքով շինած իրը։ Ուղիղ է, վերև յիշած միքանի զբաղմունքներից չի կարելի գործնական օգուտ քաղել, քանի որ օրինակ՝ դարսուած ձողիկները, մօզայիկները կամ աղիւսակներից կառուցած տունը վերջ ի վերջոյ պէտք է երեխան ցրւի կամ քանդի և նիւթը նորից գործածի մի ուրիշ խաղի համար, ասել է թէ՝ խաղի արդիւնքը պէտք է ոչնչանայ։ Բայց այնտեղ, որտեղ մանկական աշխատանքից կարելի կը լինի որևէ օգուտ քաղել, ձեռքից բաց չը թողնենք և այդ օգուտը քաղենք։ Ուրեմն հէնց որ երեխան հմտութիւն ձեռք կը բերի, կը կարողանայ վարժ ծալել թուղթը, ասենք նրան թէ հարկաւոր է շինել մի տուփ խոհանոցում աղ պահելու համար. իսկ եթէ նա արդէն լաւ կարել գիտէ դունաւոր թելերով, թող աշխատի լամպի լուսամփոփ կարել, կամ մի ժապաւէն՝ գրքի կարդացած երեսը չը կորցնելու համար, կամ մաշիկ ժամացոյցի համար, որ պիտի նուիրի մայրիկին կամ հայրիկին, ծննդեան օրը,—և անկասկած երեխան աւելի մեծ եռանդով և աշխատասիրութեամբ կը ջանայ գլուխ բերել իր գործը։—

Դաստիարակի մասնակցութիւնը խաղի մէջ։—Խաղալիքների շատութիւնը։—Խաղերի տեսակները։—Նմանողութիւնը։—Օրինակը։—Երեխայի էնքնուրոյն աշխատութիւնները։

Այժմ հարց է ծագում թէ ինչպէս պէտք է իրենց պահեն դաստիարակները մանկական խաղերի նը-կատմամբ։ Այս հարցին միայն մի հակիրճ պատասխան ու նենք,—որչափ կարելի է ձեռնապահ, ոչ-ներգործական կերպով։ Քանի որ մեր գլխաւոր նպատակը այս ամբողջ շրջանում պէտք է լինի այն, որ երեխան սովորի ինքը խաղալ, ուստի մեր միջամտութիւնը այն ժամանակ միայն տեղին կը լինի, երբ երեխան արդէն չը գիտէ թէ ինչ պէտք է անի իր խաղալիքի հետ, երբ ձանձրացելէև չի կարողանում որևէ օգուտ քաղել նրանից։ Ամեն մի երեխայ, նոյն իսկ դեռ խօսել չիմացողը, ինքն իր ժամերով զբաղանում է, իսկ աւելի ուշ, յատակին նստած, երկար ժամանակ ինքը զբաղւում է իր խաղալիքով։ Այն երեխան, որին միշտ ուրիշներն են խաղացնում, դառնում է վերջը անօգնական, ինչպէս այն՝ աւելի մեծ, երեխաները, որոնց շարունակ ուրիշներն են օգնում դասեր սովորելու մէջ։ Լիակատար վստահութեամբ կարելի է ասել այն չորս տարեկան երեխայի մասին, որը մի երկու ժամ զբաղւում է իր ազգիւսակների տուփով և կառուցանում է նոր և նոր շինութիւններ,—թէ դա նոյնպէս լաւ կը սովորի, ինչպէս որ այժմ լաւ խաղում է։

Բայց որովհետև խաղի գլխաւոր նպատակն է երե-

խայի մտքի գործունէութիւնը արթնացնել և այդ ճանապարհով նրա հոգին շարունակ ուրախ տրամադրութեան մէջ պահել, հասկանալի է որ չը պէտք է մէկ անգամից նուիրել երեխաներին չափազանց շատ խաղալիքներ։ Շատ խաղալիքներ միաժամանակ ստացած մանուկները գտնւում են մի տեսակ շփոթութեան մէջ, որովհետև չը գիտեն, թէ որին տան առաջնութիւն. իսկ որովհետև խաղալ բոլոր խաղալիքներով միաժամանակ՝ չեն կարող, ուստի մէկից արագ անցում են միւսին և ոչ մէկից չեն ստանում այն մտաւոր օգուտը, որը պիտի ստանային։ Այդպիսիների դրութիւնը շատ է յիշեցնում առակի այն էշին, որը կանգնած է եղել գարու և խոտի մէջտեղ և վերջը սովից սատկել է, որովհետև չի իմացել թէ որից նախ սկսի ուտել։

Երեխաների՝ խաղալիքներով կշտանալն ու ձանձրանալը առաջ է գալիս մանաւանդ մօտիկ ազգականների և տան բարեկամների շնորհիւ, որոնք գիտեն որ աւելի շուտ շահած կը լինեն ծնողների սիրտը, եթէ երեխաներին հաճութիւն պատճառած լինեն, և նուիրում են այդ երեխաներին թանկագին ընծաներ։ Բայց և այս չարիքի ճարը հեշտ է գտնել. կարելի է երեխաների ձեռքին թողնել խաղալիքներից մի քանիսը, իսկ միւսները պահել և տալ մէկ-մէկ, միայն այն ժամանակ, երբ նախորդները կը կորցնեն նորութեան հրապոյրը։ Մի առժամանակ թաղցրած հին խաղալիքները մանկական աչքում կրկին նոր հրապոյր են ստանում, երբ մի յայտնի ժամանակամիջոցից յետոյ նորից տրւում են նրանց։ Այդ խաղալիքները կարծես հին, վաղուց չը տեսնւած բարեկամներ լինեն, որոնց հետ երեխաները քանի՞ քանի՞ քաղցր վայրկեաններ են արդէն անցկացրել, և այդ պատճառով նրանք աւելի ուրախութիւն են պատճառում, քան թէ բոլորովին նոր իրերը։ Այս եղանակով չնչին ծախսերով կարելի է երեխաներին անընդհատ ուրախութիւն պատճառել և պահպանել նրանց մէջ մտքի թարմութիւնն ու աշխոյժը։

Եթէ մենք առանձնապէս շեշտում ենք այն հանգամանքը, որ երեխան որչափ կարելի է ինքը խաղայ, այստեղից բոլորովին չը պէտք է եզրակացնել որ հասակաւորները չը պէտք է երբեմն միջամտեն նրա խաղին, որ չը պիտի ցոյց տան նրան, թէ ինչպէս կարելի է զբաղւել օգտաւէտ կերպով այս կամ այն խաղալիքով, որ վերջապէս՝ իրենք էլ չը պէտք է նրա հետ խաղան։ Երեխաներն էլ հասակաւորների պէս երբեմն ունենում են մտաւոր ձանձրոյթի րոպէներ, երբ իրենք անկարող են լինում ընդդիմադրելու իրենց ճընշող ձանձրոյթին։ Այսպիսի րոպէներում մեծերի միջամտութիւնը բոլորովին տեղին է և երեխաները երախտագիտութեամբ կընդունեն նրանց միջամտութիւնը և օգնութիւնը, եթէ միայն մեծերը ցոյց կը տան իրենց թէ ինչպէս պիտք է խաղան այն իրերով, որոնք մինչև այդ ժամանակ երեխաների դիտողութեան շրջանից դուրս են եղել, և եթէ մեծերը իրենց երևակայութեամբ կը կենդանացնեն այն, ինչ որ երեխաներին մինչև այդ ժամանակ մեռած էր թւում։ Այնպայման կերպով սակայն հարկաւոր չէ խառնւել մանկական խաղին այն ժամանակ, երբ երեխաները իրենք հանգիստ և անաղ-

մուկ խաղում են։ Այսպիսի դէպքերում մեծերի խառնուելը խզում է մանուկների մտքերի թելը, քանի որ ստիպում է որ նրանց մտաւոր գործունէութիւնը ուրիշ շաւղով ընթանայ։ Այս ընդհատումը երեխաների վրա վատ տպաւորութիւն է թողնում և առաջացնում է տհաճութիւն ու դժգոհութիւն։ Երեխաները այս դէպքում այն՝ թուղթ կամ նարդի խաղացողի դրութեան մէջն են ընկնում, որը արդէն իր մտքում որոշ հաշիւներ է արել, նպատակներ է դրել և այդպէս է թուղթը վայր գալիս կամ քարը տեղից շարժում, իսկ այդ միջոցին մօտենում է աւելի վարժ խաղացողը և խորհուրդ է տալիս նրան ուրիշ խաղ, որ բղխում է մտքերի բոլորովին այլ զուգակցութիւնից։ Սովորաբար այսպիսի դէպքում խաղացողը տանուլ է տալիս, քանի որ չէ կարողանում առաջուց գուշակել և հասկանալ իր խորհրդատուի մտքերի զուգակցութիւնը և այդ զուգակցութեան հետևանքները, և երախտագիտութեան զգացմունքի փոխարէն, որ առաջ նա տածում էր դէպի իր խորհրդատուն կարծեցեալ օգնութեան համար, այժմ նրա սիրտը լցւում է անբաւականութեամբ։

Վերև յիշած խաղերը զարգացնում են գլխաւորապէս մանուկի երևակայութիւնը, այսինքն՝ զանազան զուգակցութիւնների մէջ են դնում նրա հասկացողութիւնները, բայց կան և ուրիշ, առանց գործիքների խաղացող խաղեր, որոնք առաջիններից ոչ-պակաս զարգացնում են մանկական միտքը։ Այդ խաղերը կարող ենք ընկերական խաղեր անուանել, որովհետև

դրանց մէջ մասնակցել կարող են միաժամանակ բազմաթիւ երեխաներ։

Սովորաբար այդպիսի խաղերը պէտք է առաջնորդի մի հասակաւոր մարդ, որովհետև երեխաները առանց նրա օգնութեան չեն կարող գլուխ դուրս տանել։ Նրա օգնութեան չեն կարող գլուխ դուրս տանել։ Նմրական խաղերից շատերը հանրածանօթ են և մեծ մասամբ առնուած են ժողովրդի միջից։ Այդ զարմանութիւնների ժամանակ մէկ անգամից կարելի է զանազանել ժիր և աչքաբաց երեխաներին ծանրաշարժ երեխաներից, որոնց միտքը քաշ է գալիս կրիայի քայլերով։

Ընկերական խաղերը առանձնակի խաղերից այն առաւելութիւնն ունեն, որ կարող են խաղացել թէ առաւելութիւնն ունեն, որ կարող են խաղացել թէ բացօդեայ և թէ սենեակում և շարունակ շարժման մէջ են դնում փոքրիկ երեխաներին։ Հէնց որ հասակը և տարեայ եղանակը թոյլ են տալիս, ամենից լաւն է թէ մէկ և թէ միւս, տեսակ խաղերը իրար հետ միացնել։

Երբէք չը պէտք է թոյլ տալ, որ երեխան երկար ժամանակ անցկացնի ոչ մի բանի մասին չը մտածելով։ Եթէ նա ձանձրացրել է մի խաղալիքից, տանք նրան մի ուրիշը։ Եթէ դա էլ նրան չի զբաղեցնում, պարենք նրա հետ, երգենք որևէ ախորժելի եղանակ, իսկ եթէ դուրսը լաւ օր է, գնանք նրա հետ զբօսնելու, պատմենք նրան որևէ հետաքրքրական բան, կամ սկսենք նրա հետ միասին խաղալ։ Բայց ոչ մի կերպով թոյլ չը տանք որ նա մնայ մտաւոր և մարմնական անգործութեան մէջ, որովհետև երեխայի բնական ձգտումն է

գործունէութիւնը, և միայն հիւանդ կամ թուլակազմ երեխան է զգում դժկամակութիւն դէպի այդ։

Բացի գործունէութեան ձգտումից, երեխայի մէջ նկատւում է նաև նմանողութեան ձգտում, որից պիտի օգուտ քաղենք նրա հոգեկան և բարոյական կրթութեան համար։ Երեխաները-սիրում են հետևել հասակաւորների օրինակին և եթէ ուզում ենք, որ երեխան սիրով և յօժարութեամբ կատարի այս կամ այն գործը, չը պիտի հարկադրենք նրան, այլ ինքներս նրա ներկայութեամբ կատարենք այդ գործը։ Թող նա զարմանայ մեր ճարպիկութեան և հմտութեան վրա, և անկասկած մի փոքր ժամանակից յետոյ ինքն էլ կուզենայ նոյնն անել։ Ուրեմն ծալենք երեխաների աչքի առաջ տուփ, թռչնակ, նաւակ և այլն, դարսենք մօզայիկները, կազմենք ձողիկներից տուն, կարենք գեղեցիկ զարդ թղթի վրա կամ ծեփենք կաւից կամ մեղրամոմից թռչնակ, շնիկ, և այլն, և անտարակոյս երեխան իսկոյն կը խնդրի, որ իրան ցոյց տանք թէ ինչպէս պէտք է այդ անել։

Սակայն թող չը սխալւենք, մտածելով թէ երեխան մէկ անգամից կը սիրի որևէ գործ. ընդհակառակը, յաճախ շատ ժամանակ է անցնում, մինչև որ երեխայի մէջ զարթնում է նմանողութեան խիստ փափագը և այդ փափագը գործի է անցնում։ Անշուշտ կանցնեն երկու և երեք շաբաթներ, որոնց ընթացքում նա կարծես անտարբեր կը նայի մեր գործի վրա։ Բայց թէկուզ նոյնիսկ աւելի երկար մենք հարկադրւած լինենք սպասելու երեխայի մէջ հետաքրքրութեան զարթնելուն, անշեղ ընթանանք այդ ճանապարհով, քանի որ նրա հոգու մէջ մէկ անգամ արթնացած փափագը հաւիրապատիկ աւելի մեծ նշանակութիւն ունի, քան թէ մեր հրամանը։ Այն երեխան, որը մեր պատւէրով է գործը կատարում, շատ աւելի քիչ զարգացում է զգում, քան թէ երբ կատարում է նոյնը սեփական ներքին դրդումով։ Ոչ մի դէպքում չը ծաղրենք երեխայի անաջող փորձերը և ներողամտութեամբ գնահատենք նրա ճիգերը, ցոյց տալով միայն, թէ այս կամ այն բանը կարելի էր աւելի լաւ անել։ Միւս կողմից՝ չափազանց չը գովենք նրա նոյն իսկ միջակ և լաւ աշխատութիւնը, այլ ցոյց տանք փոքրիկ թերութիւնները, որպէս զի նրա մէջ միշտ կենդանի մնայ աւելի կատարեալ գործ առաջացնելու, աւելի առաջադէմ լինելու ձգտումը։

Այս տեսակ յօժարակամ աշխատանքը կարող է ամեն օր կէս-կէս ժամ տեւել, հետզհետէ և աւելի երկար, նայելով երեխայի սիրոյն և հաճութեանը։ Այդ աշխատանքը զանազանակերպութիւն կը մտցնի նրա ամենօրեայ գործերի մէջ և կը նախապատրաստի աւելի կարևոր և սիստեմատիք աշխատանքի, իսկ եթէ յիշելու լինենք նաև, որ գործունէութեամբ է կազմակերպւում կամքը և որ կրթութեան գլխաւոր նպատակը ոչ թէ կամքի ոչնչացնելն ու ճնշելն է, այլ նրան նպատակայարմար ուղղութիւն տալը, այն ժամանակ կը հասկանանք, որ այդպէս հետզհետէ սովորեցնելով երեխային աշխատել՝ կը հասնենք շատ մեծ և բարերար արդիւնքների ոչ միայն նրա մտաւոր ուժի, այլ և բնաւորութեան զարգացման մէջ։

Խաղալիքների ընտրութիւնն ու արժէքը, նրանց ազդեցութիւնը։ Խաղալիքների տեսակները։—Թանկագին և էժանագին խաղալիքներ։—Երեխաների ձեռքով պատրաստած խաղալիքներ։—Խաղն ու աշխատանքը։

Մնում է վերջապէս որ կանգ առնենք հէնց խաղալիքների և նրանց համեմատական արժէքի վրա։ Վերև յիշած խաղալիքները և խաղերը համապատասխանում են իրենց նպատակին, քանի որ միքանիսը՝ մասնաւորապէս երեխաների միտքն են գործունէութեան մէջ գնում, միւսները զարգացնում են նրա մարմինը, դարձնելով նրան աւելի ճկուն, վերջապէս՝ շատերն էլ մի անգամից այդ երկու նպատակներն ունեն աչքի առջև։ Բայց չէ՞ որ խաղալիքների խանութները, բացի վերև յիշած իրերից, լցած են ամեն տեսակ առարկաներով, որոնք աչքի են ընկնում իրենց սրամտութեամբ, գեղեցկութեամբ և... թանգութեամբ։

Շատ և շատ սխալւում ենք, կարծելով թէ ինչքան աւելի գեղեցիկ խաղալիք նուիրենք երեխային, այնքան աւելի մեծ ուրախութիւն պատճառած կը լինենք նրան։ Երեխան ստանալով երկու տիկիկ — մէկը՝ սովորական, իսկ միւսը՝ սաստիկ թանկագին,—մեղրամոմ գլխով, բնական մազերով, նորագոյն պարիզեան նուրբ տարազով, անկասկած առաջնութիւն կը տայ վերջինիս, բայց ոչ երկար ժամանակ. մի կարճ միջոցից յետոյ մի կողմ կը շպրտի նրան և կը դառնայ հասարակ տիկնիկին։ Ինչպէս որ երեխայի համար ամենայարմար շորը համեստ շորն է, որի կեղտոտելուց

առանձին երկիւղ չունենն,—մի շոր, որ թոյլ է տալիս և դատկոտել, և պար գալ, և վազել, մի խօսքով՝ չի կաշկանդում նրա աղատ շարժումներն և ուրախ խաղերը, այնպէս էլ ամենայարմար խաղալիքները նրա համար կը լինեն հասարակ և քիչ արժէքաւոր և ոչ թանկագին խաղալիքները։ Իր պարզ տիկնիկը երեխան կարող է զգեստաւորել, մերկացնել, պառկեցնել անկողնի մէջ և առանց որևէ արգելքի խաղալ, մինչդեռ նրա գեղեցիկ, թանգ զգեստներով զարդարուած տիկնիկին նա կարող է միայն զբօսանքի տանել և այն էլ միշտ վախենալով, չը լինի՞ թէ նրա գեղեցիկ զգեստը փչանայ։ Սակայն բացի դրանից, կան այլևս ուրիշ շատ խաղալիքներ, որոնց հետ երեխաները առաջին յափշտակութիւնից յետոյ չը գիտեն իսկապէս թէ ինչ անեն։ Անուշադիր լաւ խաղալիք է մի փոքրիկ արջ, բնական բրդով, ետևի թաթերի վրա մեքենայի օգնութեամբ բարձրացող և մրթմրթոց հանող, բայց հէնց որ երեխան մի ժամ նրանով խաղայ, կը կշտանայ նրա տեսքից, արդէն այլ ևս չի մտածում նրա մասին. մինչդեռ մի հասարակ, կոպիտ շինուած արջ կարող է նրան և ձիու և էշի, իսկ նեղն ընկած ժամանակ նաև շան տեղ ծառայել, ասել է թէ՝ երեխան կարող է նրանից օգտուել զանազան նպատակներով։

Այս տեսակ անգործնական խաղալիքների շարքը պէտք է դասել այն բոլոր խաղալիքները, որոնք ունենն սրամիտ բարդութիւններ, օրինակ՝ ձայն են հանում, վազում են, թռչկոտում են, նստում են այլն։ Ի հարկէ, մարդուն դուր է գալիս տեսնել մի գեղեցիկ կառաւոր-

ւած դահլիճ, որտեղ տեղաւորուած են մի քանի փոքրիկ ֆիգուրներ, որոնք ներկայացնում են հիւրի ընդունելութիւն։ Գեղեցիկ է նաև ճօճանակը, կարուսէլը կամ սատանայական ջաղացը՝ նրանց մէջ տեղաւորուած մարդկանցով, բայց ասէք խնդրեմ, ինչ պիտի երեխան անի այդ միշտ միևնոյն դրութեան մէջ մնացող անձնաւորութիւնների հետ։ Քիչ թէ շատ կարճ ժամանակամիջոցից յետոյ երեխայի աչքը կը կշտանայ նրանց տեսքով և նա կսկսի անտարբեր հայեացքով նայել նրանց։ Այսպիսի խաղալիքները իզուր միայն քամում են ծնողական գրպանները, իսկ երեխային ոչ մի օգուտ չեն բերում։

Հասարակ խաղալիքներից յետոյ երեխաները ամենից շատ սիրում են իրենց ձեռքով շինած խաղալիքները։ Փալասների մէջ փաթաթուած փայտի կոտորը այն երեխայի համար, որի ճաշակը չեն փչացրել թանգագին խաղալիքներով, կը լինի նոյնչափ գեղեցիկ տիկնիկ, որչափ և մի այլը։ Առհասարակ իբրև կանոն պէտք է ընդունենք, որ երեխային չը պէտք է տալ մի այնպիսի խաղալիք, որ նա ինքը կարող է շինել։ Տանք օրինակ՝ ձի, բայց մտրակը թող նա ինքը շինի, և այդ մտրակը նրա համար աւելի սիրելի կը լինի, քան թէ խանութում թանգ գնով ձեռք բերուած մի ուրիշ ամենագեղեցիկ մտրակը։ Զառնենք նրա համար արձիձէ զինուորներ, այլ տանք աններկ զինուորների պատկերներ—ներկելը, կպցնելը, կանգնեցնելը թող նրա գործը լինի։ Անշուշտ հարկ եղած դէպքում չը պիտի խոյս տանք այս աշխատանքի մէջ նրան օգնելուց։

Այսպէս նրա ձեռքով զգեստաւորուած և դասաւորուած զօրագնդերը նրան աւելի մեծ ուրախութիւն կը պատճառեն, քան թէ ամենագեղեցիկ փայտէ կամ արձիձէ զինուորները, որոնց շինելու մէջ ինքը ոչ մի մաս չի ունեցել։

Վերջապէս երեխաներին զբաղեցնում են նաև որոշ գործառոյթիւնները տնտեսութեան մէջ, բայց ամեն ինչ կախուած է այն եղանակից, թէ ինչպէս սիրել կը տանք նրանց այդ զբաղմունքը։ Ուրիշ ազդեցութիւն կունենայ երեխաների վրա, եթէ մայրը նրան յայտնի, որ վաղը, իբրև վարձատրութիւն նրա խելօք և կարգապահ լինելու համար, թոյլ կը տայ որ օգնի թարմ սիսեռը խոտակելու, կամ պոչերը պոկելու կեռասներից, որոնց պիտի մուրաբայ (անուշեղէն) եփի—և ուրիշ ազդեցութիւն, եթէ մայրը սկսի ուղղակի հարկադրել նրանց այդ անելու։

Առաջին դէպքում նրանց համար այդ կը լինի խաղ, իսկ երկրորդ դէպքում՝ աշխատանք, ուստի առաջին դէպքում նրանք սիրով կը կպչեն գործին և կը սովորեն աշխատել ընդհանուրի օգտին։

Վերջապէս խաղալիքների շարքը պէտք է դասենք նաև հեշտ և մատչելի ձևով առաջարկուող հանելուկները։ Դրանց թիւը չը պիտի չափազանց շատ լինի, որովհետև երեխան ճշմարիտ՝ մեծ հաճոյք է զգում, երբ կարծես առաջին անգամն է լուծում արդէն իրեն տաւ ծանօթ հանելուկը։ Այստեղ գլխաւորն այն է, որ երեխայի սէրը և հետաքրքրութիւնը զրգռուի, ոչ թէ նրա միտքը սրուի։

Համեմատաբար աւելի շատ տեղ տալինք այս զրքի մէջ մանկական խաղերին և խաղալիքներին այն պատճառով, որ մեր համոզմունքով՝ դրանք երեխայի մտաւոր կրթութեան ամենաէական միջոցն են մինչև վեց տարեկան հասակը, իսկ բոլոր ուրիշ միջոցները այն է՝ գրութիւնը, ընթերցանութիւնը կամ լեզուների ուսուցումը ճնշում են միայն երեխաների հոգին և զրկում են նրան բնական ազատութիւնից, ուրախութիւնից։

ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Երեխայի ստախօսութիւնը, հանաքները։—Խոստմնազանցութիւնը։ քօղարկումները։—Դայեակի ստախօսութիւնը։ — Մօր ստախօսութիւնը, սպառնալիքի ազդեցութիւնը, պատժի երկիւղը, ակամայ և գիտաւորեալ ստախօսութիւնը։—Օրինակը։

Երեխայի սէրը դէպի ծնողները, հնազանդութիւնը նրանց հրամաններին և պատուէրներին, կարգապահ, գործունեայ և աշխատասէր լինելու սովորութիւնը և վերջապէս՝ լաւ օրինակը ոչ միայն կը պահպանեն երեխային բարոյական թերութիւններից, այլ նոյնիսկ կը դառնան բարերար սաղմեր բոլոր այն գեղեցիկ յատկութիւնների համար, որոնք ժամանակով պիտի զարգանան նրա հոգին։ Այսպիսի բարեյաջող դէպքերում կարծես նրա մէջ չը պիտի նկատուէր ոչ ստախօսութիւն, ոչ էլ խաբեբայութիւն։ Սակայն այնուամենայնիւ երեխան կարող է դեռ ևս ստախօս լինել։ Այդ պատճառով մենք

պէտք է աւելի կանգ առնենք ստախօսութեան ծագման հարցի վրա։ Եթէ կամենում ենք երեխայի հոգին պահպանել այդ զզուելի արարքից, անհրաժեշտ է հասնել մինչև աղբիւրը և հասկանալ՝ որտեղից են բղխում սըտախօսութեան աղբիւրը, — այլապէս մենք ոչ մի կերպ չենք կարողանայ նրա առաջն առնել։

Երեխան բնութիւնից ճշմարտախօս է։ Ինչ որ հաւանում է, այն բանի կողմն է պարզում իր ձեռքը կամ խօսքով պահանջում, իսկ ինչ որ նրան զզուեցնում է, նա իրենից ետ է մղում։ Երեխան նոյն իսկ չէ կարող ուրիշների ստախօսութիւնը տանել։ Նկատած է որ ոչ մի բան այնպէս չի վրդովում մանուկին, ինչպէս նրա ներկայութեամբ ասուած սուտը։ Այլ կերպ չի էլ կարող լինել, որովհետև ստախօսութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մարդուս մաքառումը իր գիտակցութեան հետ, իսկ ամեն մաքառում պահանջում է մի յայտնի մտաւոր լարում, որ երեխայի ուժից վեր է։ Ուրեմն երեխայի ճշմարտախօսութիւնը նրա արժանաւորութիւն չէ, այլ անխուսափելի հետևանք է նրա հոգու կազմութեան։

Ապա ինչից է որ ստախօսութիւնը յաճախ բուն է դնում երեխայի ներքին աշխարհում։

Եթէ յիշեցինք, որ երեխան բնութիւնից սիրում է և պէտք է սիրի ճշմարտութիւնը, այստեղից բոլորովին չի հետևանում, թէ նա չի կարող յաճախ շեղուել այդ ճանապարհից, բայց այս դեռ խաբեբայութիւն չէ, որովհետև խաբեբայութիւնը միայն ճշմարտութիւն գիտամամբ չասելն է։ Երեխան դեռ հարկաւոր վարժութիւնամբ չասելն է։

թիւնը չունի ճիշտ դիտելու, դեռ չի հասկանում ժամանակի շատ և շատ յարաբերութիւնները, չի կարողանում զանազանել այս օրը վաղուանից և երեկուանից, սխալ է շաղկապում իր հասկացողութիւնները և սխալ եզրափակութիւններ է անում նրանցից, և այս բոլոր դէպքերում շատ անգամ նա ենթարկւում է իր դեռ ևս անզուսպ երևակայութեանը: Երեխան ինքը սխալւած է լինում և իր սխալը ճշմարտութեան տեղ է դնում: Դա ստախօսութիւն չէ և չը պէտք է համարել ստախօսութիւն. այսպիսի դէպքերում պէտք է ուղղել երեխայի սխալը, ցոյց տալով նրա դիտողութեան մէջ սպրտած անճշտութիւնը:

Եւ էլ, եթէ երեխան շարունակ իր շուրջը ճշմարտութիւն է լսում, երբէք նրա մտքով էլ չի անցնի սուտ խօսել:

Սակայն շատերը՝ չընայելով որ իրենք էլ սիրում են ճշմարտախօս լինել, թոյլ են տալիս իրենց հանաք անել երեխաների հետ պահանջելով, որ հաւատան բոլորովին անհաւանական բաներին. երեխաների դիւրահաւատութիւնը այդ հասակաւորներին զարմացնում է, իսկ չեն նկատում, որ այդպիսով երեխային էլ դըրդում են նոյնպէս վարելու իրենց հետ: Սրամիտ երեխան մի երկու անգամ խաբւած լինելով՝ օգտւում է պատասխանելու իրաւունքից և խաբում է մեծերին: Յանդիմանելու փոխարէն հասակաւորները հիանում են երեխայի կարծեցեալ հնարագիտութիւնից և այդպիսով միմիայն աւելի են խրախուսում նրան որ իրենց այդպիսի հաճոյքներ պատճառի: Այսպիսի հանաքը, կատակը դեռ ստախօսութիւն չէ, բայց յարդարում է ստախօսութեան ճանապարհը, որովհետև համոզում է երեխային, թէ երբեմն կարելի է նաև սուտ ասել և դրա համար գովասանքի արժանանալ:

Երեխան նոյնպէս չը պէտք է գիտենայ, որ կարելի է սուր խօսել. իսկ եթէ դիմում է մեզ հարցնելով՝ արդեօք այն երրորդ անձնաւորութեան ասած հանաքը ճշմարտութիւն է, մենք չը պիտի ասենք որ այն անձնաւորութիւնը սուտ խօսեց, այլ որ նա սխալւել է:

Երեխան կուրօրէն հաւատում է մեծերին. հաւատում է ոչ միայն նրանց ասածին, այլ և խոստացածին: Եթէ մեծերը չեն կատարում տւած խոստումը, նա այլ ևս չի հաւատում նրանց ճշմարտախօսութեանը: Եթէ երեխային խօսք ենք տւել, որ մի ժամից նա կերթայ զբօսնելու, իսկ որևէ այցելութիւն կամ մի այլ սիրողական հանգամանք արգելք եղաւ այդ բանին, այն ժամանակ երեխան՝ չը գիտենալով դեռ քաղաքավարութեան պայմանները և կեանքի պահանջները, մեր խոստումը չը կատարելը համարում է խոստումնազանցութիւն: Նոյնպէս լաւ չէ տալ պայմանական խոստում, —«եթէ քեզ լաւ կը պահես, խնձոր կը տամ»— քանի որ երեխան իր վարմունքը չի կարող քննադատել, իսկ խնձորը համարում է իրաւամբ իրեն պատկանող սեփականութիւն:

Վերջապէս ընկերական կենցաղավարութեան մէջ օրիկան այսպէս կոչւած՝ անմեղ ստախօսութիւններ, օրինակի համար՝ տանտէրը կամ տանտիկինը տանն են լինում, իսկ այցելուներին հրամայում են ասել իբր

թէ տանը չեն, կամ երբ սիրալիր ժպիտով և կեղծ ուրախութեամբ եմ ընդունում այցելուներին, իսկ նրանց հեռանալուն պէս դժգոհութիւն են յայտնում նրանցից։ Երեխաները երբէք չը պէտք է լինեն այսպիսի դիպուածների վկաներ և նոյն իսկ չը պէտք է լսեն սրանց մասին։

Վերջապէս բազմաթիւ ընտանիքներում տիրող արտայայտութեան և խօսելու չափազանցրած ձևերը, չափազանցրած գովասանքները և պախարակութիւնները, պատաստում է երեխայի հոգու մէջ նոյնանման չափազանցութիւն։ Քանի՞ քանի՞ անգամ լսում ենք, օրինակ այսպիսի դարձուածներ—«հազար անգամ եմ ասել քեզ, որ ձեռք չը տաս. օրէն քառասուն անգամ եմ երեսդ, ձեռներդ լանում եմ և դարձեալ կեղտոտ ես» և այլն։ Երեխան, որը դեռ չունի ոչ մի գաղափար խօսակցութեան այս ձևի մասին, զգում է իրականութեան և մեր խօսքերի անհամաձայնութիւնը և որովհետև այսպիսի խօսքերը լսում է բաւականին յաճախ, կամաց-կամաց ինքն էլ է ընտելանում և սկսում է գործածել չափազանցրած ոճեր։

Այլ ևս մէկ անգամ կրկնում ենք, որ հանաքները, խոստմնազանցութիւնները և քաղաքավարութեան գործածական սովորութիւնները դեռ ևս ստախօսութիւն չեն, բայց շատ են տրամադրում երեխային ստախօսութեան։

Այժմ անցնենք հասակաւորների այն սխալանքներին. սրանք ուղղակի, անմիջապէս տանում են երեխային դէպի ստախօսութիւնը։

Մեր ծծմայրները և դայեակները սովորաբար շատ են սկսում սիրել իրենց սանիկներին և պատրաստ են լինում ամեն տեսակ անախորժութիւն նրանցից հեռացնել, բայց որովհետև դրանք սովորաբար հասարակ կանայք են լինում, որոնք ոչ մի գաղափար չեն ունենում կրթութեան մասին, ուստի իրենց տեսակով են հասկանում այդ անախորժութիւնները և կամենալով որ և է կերպով գրաւել երեխայի սիրտը, երես են տալիս նրան և կատարում են նրա ամեն մի ցանկութիւնը։ Այստեղից առաջ են գալիս շատ անհաճելի երևոյթներ. այսպէս օրինակ՝ երեխան բարկացած խփում է ձեռքով դայեակի երեսին կամ զարնում է ոտները է ձեռքով դայեակի երեսին կամ զարնում է ոտները։ Սա գետնին և իր դայեակին այդպիսով վրդովեցնում։ Սակայն շատ սակաւ է պատահում, որ մայրը, կամենալով միջամտել գործին, իմանում է զուտ ճշմարտութիւնը։ Սովորաբար դայեակը, երեխային պատժից, խրատից, նախատինքից ազատելու համար, բոլորովին յեղաշրջում է դէպքը։ Արդեօք այդպիսի վարմունքը չպիտի՞ երեխային թելադրի մտածելու թէ ստախօսութիւնով կարելի է ազատուել պատասխանատուութիւնից։

Մի ուրիշ անգամ, իր սանիկին չափազանց սիրելուց, դայեակը տալիս է նրան այն, ինչ որ արգելել է մայրիկը և երբ մայրիկը հարցնում է, նա նորից դիմում է պատճառանքների։ Իզուր չէ ասած որ մորից յետոյ դայեակն է ամենից աւելի ազդեցութիւն ունենում երեխայի բնաւորութեան վրա։ Քանի՞ քանի՞ հասակաւորներ միայն այն պատճառով են ստախօս դառել, որ իրենց դայեակներից են ձեռք բերել

խաբելու սովորութիւնը։ Նրանք սուտ են ասում բոլորովին աննպատակ կերպով, մանկութիւնից ուղղակի սովորած լինելուց։ Որչափ յաճախ և նրանք, որոնք աւելի ուժեղ բնաւորութեան տէր են լինում, զգում են որ մի ինչ որ բան դրդում է իրենց սուտ խօսելու։

Այստեղ այլևս մէկ անգամ տեսնում ենք թէ որչափ աւելի ուժեղ և հաստատ են լինում սովորութեան ճանապարհով իւրացրած յատկութիւնները, համեմատած այն յատկութիւնների հետ, որոնք գիտակցութեան հետևանք են։

Հէնց այնպէս, ինչպէս որ դայեակն է վարւում մօր վերաբերմամբ, մայրիկն էլ է յաճախ վարւում հօր վերաբերմամբ։

Շատ անգամ պատահում է որ երեխաների չարութեան առաջն առնելու համար մայրը դիմում է հօրը, իբրև աւելի բարձր հեղինակութեան, իսկ հայրը՝ անբաւական լինելով, որ իւր հանգստի բոպէները դառնացնում են այդպիսի՝ նրա խօսքով չնչին բաներով, սաստիկ խիստ է, մօր կարծիքով, պատժում մանուկին, և այնուհետև մայրը ցանկանում է խոյս տալ այդտեսակ անախորժ տեսարաններից և թագցնում է կամ փոքրացնում է երեխայի յանցանքը և այդպիսով սուտխօսութեան օրինակ է տալիս նրան։ Եւ ինչպէս երկիւղը, ահը դրդում են մօրը ստախօս լինելու, այնպէս էլ երեխան՝ վախենալով այն անախորժութիւնից, որին ինքը կարող է ենթարկւել ճշմարտութիւնը խոստովանելուց, սուտ է խօսում իր հարազատ մօր առջև։

Երեխան մօր դէմ կռւում է նոյն զէնքով, որով մայրը կռւում է հօր դէմ։

Այսպէս տեսնում ենք երկիւղն է ստախօսութեան գլխաւոր պատճառներից մէկը, և այլ կերպ չի էլ կարող լինել, որովհետև երկչոտը ուզենայ չուզենայ պիտի դիմի ստութեանը։ Բայց մեղքը այստեղ աւելի հասակաւորներինն է, քան թէ երեխաներինը։ Յաճախ մեծերի միայն խիստ, սաստող ձայնը, նախատինքը երեխային այնպէս է կարծել տալիս, երբ թէ ինքը չափազանց մեծ յանցանք է գործել և իրեն մեծ պատիժ է սպասում։ Հօր խիստ հայեացքից և ձայնից նրա դէմքը իսկոյն փոխւում է, ստինները դողում են, դէմքը բոլոր կերպարանքից երևում է որ ճիշտ որ գործել է կասկածած յանցանքը, և այնուամենայնիւ, ինչպէս ասում են, լեզուն պապանձւում է և թոյլ չի տալիս նրան խոստովանել յանցանքը։

Երևակայենք որ ինքներս այդպիսի երեխայի դրութեան մէջ ենք, և մի փոքր միայն խստացնենք պարագաները,—դուցէ և մեր բերանը փակւի այդպիսի սպառնական ձայնից կամ ակամայ ստիպւած լինենք սուտ խօսելու։ Քաղցր խօսքերը, մտերմական դիմումը աւելի շուտով են դրդում երեխային իսկոյն ճշմարտութիւնը ասելու, միայն թէ երեխան համոզւած լինի որ իր զանցառութեան համար չը պիտի ենթարկւի չափազանց մեծ պատժի։

Նոյնպէս չը պէտք է պահանջել երեխայից, որին բռնել էք յանցանքի մէջ տեղնուտեղը կամ որը խոստովանել է իր մեղքը,—որ խօսք տայ թէ այլևս երբ

բէր չի կրկնի նոյն յանցանքը, որովհետև այդպիսի դէպքերում երեխան գտնւում է չարչարանքների ենթարկւած մարդու դրութեան մէջ, որը ճշմարտութիւնը ու սուտը խառնում է, միայն թէ ազատւի դահճի ձեռքից։

Վերջապէս խօսենք՝ ակամայ ստախօսութիւնից յետոյ, իսկական, դիտաւորեալ ստախօսութեան մասին։ Այսպիսի ստախօսութիւնը շատ սակաւ է նկատւում այն տարիքում, որը մենք աչքի առաջ ունենք, որովհետև պահանջում է աւելի բարդ մտաւոր զուգակցութիւններ, քան թէ այդ յատուկ է այդ հասակի երեխաներին։ Բայց եթէ մի այդպիսի բան, տեղի ունեցաւ և այդ հասակում, նախ և առաջ չը պէտք է այդ համարենք չափազանց մեծ կարևորութիւն ունեցող մի յանցանք և երբէք չը պէտք է ստախօս անուանենք երեխային, որը առաջին անգամն է սուտ խօսում։ Ուստի՝ եթէ երեխան առանց մեր գիտութեան վերցրել է ուրիշից և ծածուկ կերել է տանձը և մենք հաստատ գիտենք որ այդ անել կարող էր միմիայն նա, չը պահանջենք, որ խոստովանի իր յանցանքը, որովհետև դրանով կը դրդենք նրան առաջին անգամ սուտ խօսելու, այլ պարզ ասենք նրան որ այդպէս անել հարկաւոր չէ։ Իսկ եթէ մի ուրիշ անգամ նա խօսի ճշմարտութեան հակառակ մի բան, ցոյց տանք նրան մեր խորին զարմանքը և վիշտը, բայց չասենք՝ «սուտ ես խօսում», «ստախօս ես», այլ «ճշմարտութիւն չասացիր և սաստիկ վշտացրիր ինձ»։ Ամեն անգամ պէտք է սուտ խօսող երեխային ցոյց տանք որ ստախօսութիւնը նրան ոչ-մի օգուտ չի բերում, այսինքն՝ մենք պէտք է իսկոյն և եթ ձեռքիցը խլենք ծածուկ վերցրած տանձը, գրպանից հանենք թագցրած շաքարեղէնը և այլն։

Հին մանկավարժութիւնը շատ անգամ փորձութիւններ էր ենթարկում երեխային՝ թէ արդեօք կարող են նրանց դիմանալ գայթակղութեան, ուզում էր համոզւել՝ արդեօք նրանց առաքինութիւնը այնքան մեծ է, որ դիմանայ ամեն փորձութեան։ Այսպէս օրինակ՝ թողնում էին երեխային մենակ քաղցրեղէններով լիքը սենեակում և այնպէս էին անում, որ նրա աչքը միայ այդ քաղցրեղէնների վրա, աչքածակութիւնը գրգռի, տեսնենք՝ նա մի բան կը վերցնի։ Այժմեան մանկավարժութիւնը բոլորովին հակառակ սկզբունքի է հետևում և երբէք երեխայի առաքինութիւնը չի ենթարկում չափազանց մեծ փորձութեան, որովհետև գիտէ որ այդ առաքինութիւնը դեռ մի նորաբողջ բոյսի պէս քնքոյշ է, և աշխատում է հեռացնել նրանից այն ամենը, ինչ որ որևէ կերպ կարող է վնասել այդ առաքինութեան զարգացմանը, մենք պէտք է հեռու պահենք երեխային սուտ խօսելու ամեն դէպքից, ամեն մի հնարաւորութիւնից, և այդպիսով նորագոյն մանկավարժութիւնը աւելի է նպաստում երեխաների մէջ ճշմարտախօսութեան ամրապնդելուն, քան թէ հինը, որ ամեն քայլափոխում համոզւում էր թէ որքան թոյլ է և դեռ անհաստատ մանկական առաքինութիւնը։

ԲԱՐԵՍԻՐՈՒԹԻՒՆ

Բարեսրտութեան և համակրութեան առաջին նշանները։—Սիրալիրութիւն և բարեացակամութիւն պահանջելը. զոհողութիւն, ներողութիւն, նախատինք, բարի օրինակ, համակրութիւն, սեր դէպի մերձաւորը։

Սանոնաւոր պայմանների մէջ, այն է՝ առողջ և ուրախ մեծացող երեխան հեշտութեամբ իր բնական բարեացակամութիւնը և սիրալիրութիւնը տարածում է շրջապատող մերձաւոր անձնաւորութիւնների վրա։ Այդ համակրութիւնը փոքր երեխան գլխաւորապէս ցոյց է տալիս նախ դէպի չափահասները, և թէև սկզբում այդ զգացմունքը առաջանում է անօգնական լինելու անախորժ զգացմունքից, բայց և այնպէս արդէն իսկական բարեսրտութեան հիմք է հանդիսանում։

Այս համակրութեան առաջին նշանները երեխայի մէջ նկատում ենք մօտաւորապէս կեանքի վեցերորդ ամսում։ Հետզհետէ երեխայի մէջ զարթնում է համակրանք դէպի իր հասակակիցները. նա ժպտում է, երբ հայելու մէջ տեսնում է իր պատկերը, նոյնպէս ծիծաղում է, երբ տեսնում է իր նման մի ծծկեր, թէև դեռ մի առանձին հետաքրքրութիւն չէ ցոյց տալիս դէպի նա։ Այդ ժամանակից հարկաւոր է օգտուել այդ նշաններից և երբեմն առիթներ տալ հասակակիցների ընկերութեան մէջ գտնուելու։ Սակայն այդ տարիքում երեխան սովորաբար իր քնքշութիւնը աւելի ցոյց է տալիս դէպի կենդանիները, և այդ նոյն իսկ աւելի

սաստիկ, քան թէ դէպի իր նման փոքրերը։ Շունը, կատուն իրենց ուրախութիւնը արտայայտում են երեխային հասկանալի լեզուով, դրա համար է որ երեխան սիրում է նրանց և գուրգուրում, մանաւանդ որ նրանց կողմից ոչ կի ընդդիմադրութեան չի հանդիպում, մինչ դեռ իր նման փոքրերը յաճախ իրեն հակառակում են*)։

Արդէն փոքր երեխան իր բարեացակամութիւնը դէպի ուրիշները ցոյց է տալիս ժպտալով, ձեռները թափահարելով, բայց այդ բարեացակամութիւնը, որ դեռ շատ կրաւորական, չէզոք է լինում, պէտք է հետզհետէ դարձնել գործունեայ, ներգործական։ Դայեակի կամ մէկ ուրիշի խնդրելով. երեխան տալիս է նրան մի փոքրիկ կտոր ձեռքին ունեցած սպիտակ հացից. ստացողը ուտում է երեխայի ներկայութեամբ և ցոյց է տալիս նրան իր երախտագիտութիւնը։ Երեխան տեսնելով որ ուրիշին մի ախորժելի բան է արել, ցանկանում է կրկնել իր նէրը։ Այսպիսի փորձերն և վարժութիւնները շատ ու շատ նպատակայարմար են և սովորեցնում են գործով ցոյց տալու սիրալիրութիւնը, միայն թէ ինքնակէ՝ չը պէտք է այդ փորձերը յաճախակի կրկնել և չը պէտք է պահանջել սաստիկ մեծ զոհաբերութիւն

---

*) Օգտուելով հանգամանքից նախազգուշացնում ենք, որ չը պիտի թոյլ տալ, որ երեխան շոյի շանը կամ կատուին, որովհետև երեխան յաճախ մատը բերանն է տանում և հեշտ կարող է կուլ տալ այդ կենդանիների մազի մէջ բուն դրած վնասակար միջատները,—էլ չենք ասում որ չը պէտք է թոյլ տալ համբուրել կենդանիներին։

երեխայի կողմից։ Այսպիսի փորձերը սակայն դառնում են անհարատակայամար, եթէ ընդունողը՝ տեսնելով երեխայի ծամածուած երեսը և արդէն լաց լինելու պատրաստ շրթունքները, շտապով վերադարձնում է իրեն տուած նուէրը և դեռ շնորհակալութիւնն էլ է յայտնում երեն ցոյց տուած բարութեան համար։ Ի հարկէ նոյն իսկ ամենաչնչին զոհաբերութիւն կարող է այնքան էլ ախորժելի չը լինել, բայց այդ փոքրիկ դառնութեան վարձատրութիւնը կը լինի այն ուրախութիւնն և երախտագիտութիւնը, որ ցոյց է տալիս ընդունողը։ Բայց եթէ նկատենք որ զոհաբերութիւնը երեխայի համար արդէն շատ ծանր է, աւելի լաւ է չը պահանջենք, որովհետև այդպիսով նրան զրկեցնում ենք բարեգործութիւնից, որը նրան այնպիսի մեծ անախորժութիւն է պատճառել։

Քանի աւելի երեխան մեծանում է, այնքան աւելի պէտք է ընդարձակեն նրա ներգործական բարեսիրութեան շրջանը, սովորեցնելով որ կերակրի շանը, կատուին, ծտիկին կամ ճուտին։ Թող նրա ձեռքը սովորի թէկուզ մի փշրանք հանել իր սեփական բաժնից ուրիշ կենդանիների համար. թող սովորի մեծարել իր հասակակիցներին և մեծերին այն քաղցրեղէնով, որ ստացել է իր ծննդեան, անուանակոչութեան օրայ առիթով կամ մի ուրիշ պատճառով։ Այսպիսի դէպքերում ազատութիւն տանք նրա կամքին, կարող ենք ուղիղ է՝ նրան խորհուրդ տալ, խրախուսել, բայց թողնենք որ ինչ ուզում է անի իր սեփականութեան հետ։ Նոյնպէս շատ վատ կը լինէր, եթէ այդ առիթով

մենք նրան յանդիմանութիւն կարդայինք և նոյն իսկ աւելի կը նպաստէր նրա բարեսրտութեան զգամունքի զարգանալուն այն, որ նա, ինչպէս առակի առիւծը, ինքը բաժանի իր ունեցածը և իրեն թողնի ամենամեծ բաժինը, քան թէ այն, որ նա մեր հրամանին հնազանդի և բոլորովին այլ կերպ վարի։ Առաջին դէպքում նրա արածը կը լինի բոլորովին ազատ, իսկ երկրորդ դէպքում նա մեր կամքը կատարի, բայց սրտի խորքում կը ափսոսայ իր արած բարի գործի համար։

Հետզհետէ երեխան պէտք է իր համակրանքը ուղղի աւելի ու աւելի լայն շրջանին. նա պէտք է բոլոր մարդկանց բարի համարի։ Եթէ երեխաները իրար հետ վիճում են և իրար հետ ընդհարւել են, թող երբէք մայրը չը յանդիմանի ուրիշի երեխային և թող իր սեփական երեխայի պաշտպան չը կանգնի։ Այն դայեակը, որը շուտով խատում է խաղընկերի հետ կուռ իր սանիկին և սկսում է նախատել նրա հակառակորդին, շատ վատ օրինակ է տալիս իր սանիկին և բարկութիւն է սերմանում նրա սրտի մէջ դէպի իր նման էակը։ Նոյնպէս անմիտ վարմունք է այն դաստիարակչուհու վարմունքը, որը՝ կամենալով վայր ընկած երեխայի լացը կարել տալ, խփում է յատակին կամ թէ հրամայում է որ խփի մի ուրիշ անձին, որը իբր թէ նրա անշնորհութեան պատճառ է եղել։ Այսպիսի դէպքերում երկու սխալ է նա գործում. մէկ՝ որ թոյլ չի տալիս երեխային ճիշտ ըմբռնել իր անկման իսկական պատճառը, և երկրորդ՝ որ բարկութիւն է արծարծում նրա մէջ դէպի կողմնակի անձերը։

Երեխաները, որչափ կարելի է, չը պէտք է լսեն, ինչպէս են ուրիշներին բարկութեամբ յանդիմանում, թող այնպէս կարծեն իրը թէ բոլոր մարդիկ բարի են, թէ—և բոլորը չեն ապրում միատեսակ կացութեան մէջ, թող գիտենայ որ կան չքաւորներ և հաշմանդամներ, որ կան նաև կեանքի՝ իր ունեցած յարմարութիւններից զուրկ երեխաներ, թող սովորի որ բոլոր մարդիկ անխտիր մեր մերձաւորներն են, որոնց օգնելը մեր ամենանուիրական պարտքն է։ Աղքատի, խեղճ անդամալոյծի տեսքը թող նրա մէջ կարեկցութիւն զարթեցնի, ոչ թէ զզւանք և խորշանք, թող աշխատի նրանց անբախտութիւնը թեթևացնել սեփական միջոցներով, և ոչ միայն ծնողների հաշուով։

Երբ աղքատը դուրսը մեր ճաշի ժամանակ ողորմութիւն խնդրելիս լինի, մի ափսէ դնենք սեղանի վրա և նրա վրա հանենք մեր ամանից աղքատի բաժինը,— մի բոպէից այդ ափսէն կը լցւի մեր փոքրիկների տուրքերով։ Երբէք զզւանքով չը խօսենք չքաւորի մասին, այլ երեխայի ուշադրութիւնը դարձնենք այն բանի վրա, որ կարիքն ու անբախտութիւնն են նրանց այնպէս ողորմելի դարձել, ուստի՝ սիրայօժար կերպով մեկնենք նրանց օգնութեան ձեռքը և ժամանակ առ ժամանակ տանենք մեր երեխաներին անբախտների թաղերը, ուր նրանք կարող են իրենց աչքով տեսնել ամեն տեսակ զրկանքներ։ Ահա այս եղանակով մենք իսկական բարեսրտութեան և կարեկցութեան հաստատ հիմք դցած կըլինենք անխտիր զէպի բոլոր մարդիկ։

Թող բարի մայրիկը չը կարծի թէ այդ անկեղծ բարեսրտութեան դարդանալովը՝ կը փոքրանայ երեխայի սէրը զէպի ինքը, թող չը խաբի իրեն թէ երեխային անտարբեր մեծացնելով ուրիշ մարդկանց և կենդանիների նկատմամբ, աւելի կը տաքացնի նրա սիրը զէպի ինքը։ Այդպէս վարուող մայրը հետևած կը կը լինի փոքրի եսական ընթացքին, միայն իր համար կրթած կը լինի իր երեխային և կը լինի եսասէր մէկը, որը մեծացնում է այլևս մի ուրիշ եսասէր։ Ընդհակառակը՝ անկեղծ բարեգործութեան և զէպի մերձաւորը ունեցած գործունեայ կարեկցութեան պարարտ հողի վրա աւելի կաճի և կուժեղանայ երեխայի՝ սէրը զէպի հարազատ ծնողները։ Այն սէրը, որ հիմնուած է մերձաւորի սիրոյ վրա, հետզհետէ տարիներով ոչ թէ չի փոքրանայ երեխայի մէջ, այլ ընդհակառակը՝ խորին մեծարանքի և ակնածանքի կը փոխուի զէպի իր բարի և խելացի ծնողը։

ՇՐՋԱՊԱՏՈՂՆԵՐԻ ՈՒ ԾՆՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԷՊԻ ԵՐԵԽԱՆ

Երեխան մեծերի ընկերութեան մէջ։—Հիւրերը։—Գովասանքներն ու նախատինքները։—Թօսակցութիւնը,—Համեստութիւնն և գողոզութիւնը։ Ծաղրն ու հեգնութիւնը։—Հանաքները։—Համաձայնութիւնը ծնողների կամ դաստիարակների մէջ։

Պէտք է այստեղ վերջապէս դաստիարակների ուշադրութիւնը դարձնենք մի քանի հանգամանքների

վրա, որոնք երեխայի բարոյական զարգացման ընթացքը խանգարում են։

Ամենք մեզ հետ կը համաձայնուին, որ երեխայի համար մնալու ամենայարմար տեղը մանկանոցն է։ Սրանով չենք ուզում ասել որ մանուկը ժամանակ առ ժամանակ չը պիտի աւելի հասակաւորների ընկերութեան մէջ լինի, բայց նրա ներկայութիւնը այստեղ պիտի շատ կարճատև լինի, այլապէս կարող է նոյնիսկ վնասակար լինել։ Անկասկած՝ երեխաները չը պիտի վայրենի մեծանան, բայց շատ քիչ ծանօթ մարդկանց մէջ՝ նրանց երկար մնալը միշտ չէ ունենում լաւ հետևանքներ։ Յայտնի է որ հիւրերի առջև երեխաները լինում են աւելի անկարգ և չարաճճի և ամեն տեսակ կամակորութիւն և գժութիւն են անում։ Հիւրերով զբաղուած մայրը չի կարող հարկաւոր ուշադրութիւնը դարձնել իր երեխաների վրա, իսկ սրանք՝ սովորական հսկողութիւնից ազատուելով՝ իրենց թոյլ են տալիս ամեն տեսակ անկարգութիւններ։

Ընդունենք մի րոպէ որ փոքրիկ ընկերութիւնն և մօր ներկայութիւնը այս բոլոր անյարմարութիւնների առաջը կառնի, բայց և այնպէս՝ մեծերի ընկերութիւնից երեխայի սաացած օգուտները կը լինեն շատ կասկածելի։ Զէ՞ որ հիւրերը իրենց սրբազան պարտականութիւնն են համարում գովասանքով խօսել երեխաների մասին և հէնց երեսին գովաբանում են նրանց, կարծելով թէ այդպիսով աւելի շահած կը լինեն մօր սիրտը։ Երեխան՝ լսելով այդ չափազանցրած գովասանքները, սխալ համարում է սատանում իր մասին։ Մի՞թէ կողմից՝ մայրերն էլ յաճախ պարծենում են օտարների առջև իրենց երեխաներով, իսկ հիւրերը հետները միայն հիանում են, որովհետև էլ ուրիշ ինչ ճար ունեն։

Վերջապէս երեխաների երկարատև ներկայութիւնը տախտակալի է նաև հէնց հիւրերի համար, որոնք եկել են տանտէրերի հետ խօսելու կամ ժամանակ անցկացնելու համար, իսկ ստիպուած են լինում նրանց երեխաներով զբաղուել։ Այսպէս ամեն տեսակէտով հիւրասենեակը երեխաների համար մնալու վայելուչ տեղը չէ։

Բայց նոյնպէս անյարմար տեղ է նրանց համար նաև ծառաների սենեակը։ Փոքրաւորները առհասարակ երեխաների հետ վարուել չեն իմանում, և կամ երես են տալիս նրանց, կամ միշտ չարացնում։ Եւ սովորաբար չեն քաշւում երեխաների ներկայութիւնից և իրենց լեզուին կատարեալ ազատութիւն են տալիս և ինչ ասես կեղտոտ խօսք և հայհոյանք չեն բաց թողնում բերանից։ Վերջապէս ծառաները սիրում են անմիտ-անմիտ բաներ սովորեցնել երեխաներին, կարծես ուզենալով այդպիսով ցոյց տալ իրենց մտաւոր գերազանցութիւնը։

Ինչպէս վերև բերած դէպքերում բազմամարդ ընկերութիւնը վատ է ազդում երեխաների վրա, նոյնպէս և երեխաների մասին հէնց նրանց ներկայութեամբ շարունակ խօսելը վնասակար հետևանքներ է ունենում։ Ամենից աւելի կրթական գործը աջողում է այնտեղ, որտեղ քիչ են խօսում երեխաների մասին և ա-

ելի շատ են անում նրանց համար։ Այդ է պատճառը որ մանկական կրթութիւնը տուժում է այն տներում, որտեղ, շատերն են այդ գործին մասնակցում։ Մայրը, տատը, մօրաքոյրն և հօրաքոյրը՝ իրենց միանուագարին սրտանց սիրելուց, էլ ուրիշ բանի մասին չեն խօսում, միմեանց նրա մասին։ Ուղիղ է՝ պատահում է որ նրանք միշտ նրա բարեմասնութիւնների մասին, չեն խօսում այլ և պախարակում են նրա պակասութիւնները։ Երեխան գուցէ չի էլ հասկանայ այդ գովասանքն կամ պարսաւանքը, որ յաճախ ասւում է նրա համար անմատչելի լեզուով, բայց և այնպէս կը հասկանայ որ իր վրա է խօսքը, և կսկսի մեծ գաղափար ունենալ իր նշանակութեան մասին և իրեն կը համարի տան գլուխն ու առաջին մարդը։

Ո՞վ չը գիտի որ այդպէս ականջի ծայրով լսած գովասանքը երեխային մեծամիտ և անհամեստ է դարձնում, իսկ պարսաւանքը բթացնում է ամօթի զգացմունքը։ Բայց չէ՞ որ այս երկու զգացմունքների կրթութիւնը պիտի լինի այն ամենագլխաւոր նպատակներից մէկը, որոնց վրա պիտի ուշադրութիւն դարձնի ամեն մի դաստիարակ, որովհետև նրանք են կազմում կրթական ամենաազդու միջոցները։ Զը պէտք է կարծենք թէ փոքր երեխան ինչ է հասկանում և ինչ է իմանում զանազանել հրապարակական պարսաւանքը առանձնակի, երես առ երես յանդիմանութիւնից։ Նոյն իսկ չորստարեկան մանուկը շատ լաւ է զգում այն զանազանութիւնը, որ կայ այդ երկու տեսակ յանդիմանութիւնների մէջ, և շատ շնորհակալ է լինում մեզ-

նից, երբ այնքան շրջանկատ ենք լինում, որ չենք յայտնում ուրիշներին նրա յանցանքը։ Այս եղանակով ոչ թէ միայն չենք պատռում նրա երեսի ամօթը, այլ և արծարծում ենք ազնիւ պատուասիրութիւն, որը նրան պահում է ամեն անվայել արարմունքից։

Արդէն ցոյց տուինք, թէ ինչ նշանակութիւն ունի համեստութիւնը, և եթէ համեստութիւնը պիտի հասակաւոր մարդու բարեմասնութիւններից մէկ լինի, ուստի կեանքի հէնց առաջին շրջանից պիտի խնամքի առարկայ դարձնեն այդ կողմը։ Քանի՞-քանի՞ մայրեր սաստիկ մեծ ուշք են դարձնում գեղեցիկ զգեստի վրա, հիանում են իրենց երեխայով, ինչպէս մի տիկնիկով, զուգում զլզլտում են նրան, հրամայում են որ մէկ լաւ նայի իր պատկերին հայելու մէջ, և հպարտանում են, երբ կողքից անցնողները եւ են նայում և գնում են իրենց տղային կամ աղջկան։ Արդեօք այս ամենի բնական հետեւանքը այն չի՞ լինի, որ երեխան էլ կը սկսի չափազանց մեծ նշանակութիւն տալ իր արտաքինին։

Անյարմար է նոյնպէս հայեացքով կամ խօսքով երեխային զգալ տալ մեր հիացմունքը։ Մանուկը հասկանում է մայրական աչքերի արտայայտութիւնը և կարող է հեշտութեամբ զանազանել նրանց մէջ հանգիստ, բայց սրտաբուղխ սէրը կրքոտ հիացմունքից։

Ամօթի զգացմունքից առաջ է գալիս այն, որ երեխաները շատ դիւրազգաց են լինում և շուտ են վիրաւորում ծաղրանքից։ Երեխան՝ կամենալով ճնշել իր մէջ այն անախորժ տպաւորութիւնը, որ արել է նրա

վրա ծաղրը, սկսում է միևնոյն զէնքով պաշտպանել և հէնց որ կարողանում է՝ վճարում է ակն ընդ ական և թոյլ է տալիս իրեն ծաղրել նոյն իսկ իրենից շատ աւելի հասակաւոր մարդկանց։ Այսպիսով նա սովորում է արհամարհել այն մարդկանց, որոնց պիտի յարգէր և պատուէր։ Միւս կողմից՝ պատահում է որ ուղիղ է՝ դաստիարակները չեն ծաղրում երեխային, բայց և չեն սաստում նրան, երբ նա սկսում է զանազան ծաղրածութիւններ անել, օրինակ՝ ձևացնում է ուրիշներին, ծամածռութիւններ է անում, և նոյնիսկ ծածուկ ուրախանում են, այդ ամենը խելքի երեխայի նշան համարելով։ Երեխաները կարծում են իբր թէ այդպիսով մեծերին զարմանութիւն են պատճառում, ամեն ջանք են թափում այդպիսի մասխարութիւնների վրա և ուղղակի անտանելի են դառնում։

Եւ եթէ չը պէտք է թոյլ տանք որ երեխան ծաղրի ենթարկուի, չը պէտք է ուրեմն մենք էլ դառնանք նրա ծաղր ու ծանակ։ Թող մեծերը մասնակից չը լինեն այնպիսի խաղերին, որոնց մէջ դէմքին մուր քսելը կամ ծիծաղաշարժ ձևեր ընդունելը դրդում են երեխային մեծերի վրա ծիծաղելու։ Այդ ամենը չափազանց երես է տալիս երեխաներին, պատռում է երեսի ամօթը և նրանք մոռանում են այն տարածութիւնը, որ կայ իրենց և դաստիարակների մէջ։

Բայց ամենաշատակար ներգործութիւնն է ունենում կրթական գործի վրա անհամաձայնութիւնը երեխայի ծնողների կամ խնամակալների մէջ։ Արդէն վերև յիշել ենք թէ որչափ այդ աններդաշնակութիւնը

նպաստում է երեխայի մէջ ստախօսութեան արմատ բռնելուն, բայց դեռ ևս ուրիշ շատ պակասութիւններ կարող են առաջանալ, եթէ հայրը պախարակում է այն, ինչ որ մայրն է պատուիրում, և ընդհակառակը։ Որտեղ որ գոյութիւն ունի մի այդպիսի ակներև անհամերաշխութիւն ծնողների հայեացքների մէջ կրթութեան մասին, այնտեղ իսկապէս խօսք չի կարող լինել կրթութեան մասին, այնտեղ սիստեմատիկ կերպով երեխաների մէջ միայն պակասութիւններն են պատուաստուում առաքինութիւնների փոխարէն։ Այդ հակասութիւնը կրթական վերաբերմունքի մէջ շփոթում է երեխաներին, և սրանք այս կամ այն բոպէին կանգնում են ծնողներից նրա կողմը, ով որ աւելի է նրանց երես տալիս, և կորցնում է ամեն յարգանք կամ սէր միաժամանակ թէ դէպի հայրը և թէ դէպի մայրը։

Ընդհանրապէս, ամփոփելով մեր ամբողջ ասածը, պէտք է կրկնենք որ մանկական կեանքի այս շրջանում կրթութիւն պէտք է ունենայ մեղմ զսպման բնաւորութիւն։

ՎԵՐՋԱԲԱՆ

Երանի թէ ծնողները վերջապէս հասկանան և ըմբռնեն, որ ինչպէս երկրագործների համոզմունքով՝ ամենառատ հունձը տալիս է այն ցանքը, որը մառախուղի և մէգի ժամանակ է արուած, այնպէս էլ բոլոր բարեժամանութիւնների և առաքինութիւնների առաջին ցանքը տեղի է ունենում կեանքի առաջին միգապատ տարիներում։

Երանի թէ աւելի քիչ արհամարհեն մանկութեան այդ առաջին շրջանը։ աւելի քիչ անփոյթ գըտնըւեն այդ տարիներում, անկեղծ կերպով միաք դադարեցընեն այդ ժամանակի երևոյթների վրա և մաքերի փոխադարձ փոխանակութեամբ օգնեն իրար։ Այն ժամանակ նրանք այն յուսախաբութիւններից խոյս տըւած կը լինեն, որոնք այժմ այնպէս յաճախ են կըրկընուում. այն ժամանակ հրեշտակը մանկական հասակում՝ չի դառնայ Աստծու կրակ ու պատիժ աւելի ուշ հասակում, երբ յանկարծ երևան են գալիս այնպիսի արատներ և պակասութիւններ, որոնց գոյութեան մասին ծնողները առաջ չէին էլ կասկածում,—որովհետև կրթութիւնը ոչ թէ մի յայտնի բոպէի արդիւնք է, այլ մի երկար կապակցութիւն է պատճառների և հետևանքների, պատճառականութեան անընդհատ մի շղթայ։ Իսկ չէ՞ որ այդ գործը ահագին կարևորութիւն ունեցող մի գործ է, քանի որ երիտասարդ սերունդի վրա է հիմնուած հասարակութեան ամբողջ ապագան, իսկ մանուկ սերունդի վրա՝ երիտասարդութեան ապագան։ Ուստի ամեն մի բարի և խելացի մարդ, որ առանձին հոգատարութեամբ և հմտութեամբ մեծացընում է իր երեխաներին, մի օգնական, սրբազնագործ մշակ է, որ կառուցանում է իր երկրի բարօրութեան սուրբ սեղանը։

ՎԵՐՋ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երես

1. Սեր.—Ինչպէս արծարծել սէրը երեխայի սրտում.—փաղաքշանքներ.—պարգևներ.—մերժում։ 3—11

2. Հնազանդութիւն.—Երեխայի կամքը.—Ինչպէս ընտելացնել հնազանդելու.—հրաման և հրամաններին հնազանդելու ընտելացնելը.—անհիմն պահանջներ։ 12—20

3. Ընտեղացում.—Ի՞նչպէս սովորեցնել ժամանակին ուտել խմել, քնել, բնական պէտքերը կատարել, հագնուել։—Դիմացկանութիւն. 21—27

4. Օրինակ.—Նմանուելու ձգտումը.—մեր օրինակը.—մեծերի օրինակը.—վատ օրինակի առաջն առնելը.—հասակակիցների ընկերութիւնը.—հակողութիւնը։ 27—32

5. Մտքի կրթութիւնը.—Մտաւոր զարգացումը.—զգայարանները.—ըմբռնողութիւնը.—պատմութիւն, զրոյցներ.—նրանց ազդեցութիւնը. — ընդունակութիւնները. — պատկերն ու նկարները.—ընութեան դիտողութիւնները. 32—41

6. Խաղեր.—Ծնկերի խաղերը.—աւազ, տիկիններ, ուրիշ խաղալիքներ.—կաղապարումը, խաղալիքների և խաղի նպատակը. — Ի՞նչպէս ընտելացնել աշխատանքի 42—49

7. Դաստիարակի մասնակցութիւնը խաղի մէջ.—խաղալիքների շատութիւնը.—խաղի տեսակները.—նմանողութիւնը.—օրինակը.—երեխայի ինքնուրոյն աշխատութիւնները. . . . . 49—56
8. Խաղալիքների ընտրութիւնը ու արժէքը, նրանց ազդեցութիւնը, խաղալիքների տեսակները.—թանգագին և էժանագին խաղալիքներ.—երեխաների ձեռքով պատրաստած խաղալիքներ.—խաղն ու աշխատանքը. . . . . 56—60
9. Ստախօսութիւն.—Երեխայի ստախօսութիւնը.—խոստմնազանցութիւն, քօղարկումները.—դայեակի ստախօսութիւնը.—մօր ստախօսութիւնը, սպառնալիքի ազդեցութիւնը, պատժի երկիւղը, ակամայ և դիտաւորեալ ստախօսութիւնը.—օրինակը. . . 60—70
10. Բարեսրտութիւնը.—Բարեսրտութեան և համակրութեան առաջին նշանները.—սիրալիրութիւն և բարեացակամութիւն պահանջելը. զոհողութիւն, ներհակութիւն, նախատինք, բարի օրինակ, համակրութիւն, սէր դէպի մերձաւորը. . . . . 70—75
11. Շրջապատողների ու ծնողների վերաբերմունքը դէպի երեխան.—Երեխան մեծերի ընկերութեան մէջ.—հիւրերը.—գովասանքներն ու նախատինքները.—խօսակցութիւնը.—համեստութիւնն ու զոհողութիւնը.—ծաղրն ու հեգնութիւնը.—հանաքները.—համաձայնութիւնը ծնողների կամ դաստիարակների մէջ. 75—81
12. Վերջաբան. . . . . 83—84

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0264032